23 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2016 ՈՒՐԲԱԹ 48(5448)

Ազգ
Azg

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651

# Մոտ 5 միլիարդ դոլարի զինամթերք Ադրբեջանին

Ըստ «Իսրայել Նյուս» լրատվական գործակալության, Ադրբեջանը մոտ 5 միլիարդ դոլարի պաշտպանական զինամթերք է գնել Իսրայելից: «Ավելի ճիշտ՝ 4,85 միլիարդ դոլարի», ճշտել է Ալիեւը, ավելացնելով. «պայմանագրերի մեծ մասը արդեն գործադրվում են, եւ մենք շարունակում ենք աշխատանքները: Չափազանց գոհ ենք համագործակցության մակարդակից»: Արտասահմանյան լուրերի համաձայն, Ադրբեջանին վաճառված զենքերի թվում են իսրայելական անօդաչու ինքնաթիռներն ու ռադիոտեղորոշման սարքերը: Համաձայնություն է ձեռք բերվել նաեւ Իրանի դեմ հավաքված հետախուզական տեղեկությունների փոխանակում կատարել: Մյուս կողմից, Ադրբեջան կատարած իր այցելության ժամանակ Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն հաստատել է. «Մենք ամուր հարաբերություններ ունենք նաեւ էներգամատակարարման բնագավառում: Մենք խոսում ենք ոչ միայն ադրբեջանական նավթի Իսրայել ներմուծման մասին, որ շատ կարեւոր է մեզ համար, այլեւ իսրայելական գազի արտահանման հնարավորությունները ընդլայնելու մասին՝ Ադրբեջանից Թուրքիա կառուցվող խողովակաշարի միջոցով»: Հ. Ծ.

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Բարեգործությունը պարտականություն է նաեւ

Տարիներ առաջ էր, դեռեւս պատերազմական վիճակում գտնվող Բեյրութից առաջին անգամ հասել էի Մ. Նահանգներ՝ կուսակցական ժողովի, որի ավարտին անցա Դետրոյթ եւ, բնականաբար, ուզեցի հանդիպել ազգային մեր մեծ բարերարին՝ ՀԲԸՄիության նախագահ Ալեք Մանուկյանին: Ինձ ընդունեց իր «Մասկո» ընկերության գրասենյակում: «Զարթօնք» թերթում դեռ նոր էի տպել ամերիկյան ավտոշինարարների այդ մայրաքաղաքի հանրային գրադարանին արած նրա մեծ նվիրատվության լուրը: Զրույցի ընթացքում հարց տվեցի այդ նվիրատվության նպատակահարմարության մասին (աշխարհից մեկուսացած բեյրությանի իմ պատկերացմամբ՝ հայը պետք է միայն հային օգնի): Զարմացած, բայց խրատական տոնով, Ալեք Մանուկյանը բացատրեց. «Տղաս, ես այս քաղաքին, այս երկրին մեջ շինած եմ դրամներս. պարտավոր եմ օգնել»:

Այս դրվագը հիշեցի նախորդ շաբաթ ծանոթանալով հանրապետության նախագահի՝ մշակութային գործիչների հետ Ստեփանակերտում ունեցած հանդիպման նյութերին: Պատասխանելով մշակութային գործիչներից մեկի հարցին՝ Սերժ Սարգսյանը բացատրել է. «Բանկ ունենալը եւս սովորական բիզնես է: Այդ բիզնեսի նպատակն էլ է դրամ վաստակելը: Եթե բանկիրը տեսնի, որ սա հաջողված ծրագիր է, եւ ինքը կարող է շահույթ ստանալ, ինչու չպետք է աջակցի: Ինքը փնտրում է մի գործ, որով ինքը կարող է գումար վաստակել»: Ամեն ինչ ճիշտ է բացատրված, բայց...

Ես չգիտեմ, թե ջրի ծորակ, կահույք, տնային ու գրասենյակային բազմաթիվ այլ ապրանքներ արտադրող «Մասկո» կորպորացիան անմիջական ի՞նչ շահ ուներ քաղաքային գրադարանին եւ Միչիգանի նահանգի կրթական ու մշակութային հաստատություններին մեծագումար նվիրատվություններ անելուց, բայց...

Բարեբախտաբար Հայաստանում ունենք օտարերկրյա՝ բրիտանական, ֆրանսիական, ռուսական բանկեր, որոնք լավ էլ փող են աշխատում (թող, թող, թող), այլապես նրանք մի րոպե չէին մնա այստեղ: Սակայն ի՞նչ են անում նրանք այն ժողովրդի, այն երկրի մշակույթի համար, որտեղից, Ա. Մանուկյանի բառերով՝ շինում են իրենց դրամները: Օրինակ՝ ի՞նչ է անում 1997 թ.-ից ի վեր Հայաստանում ըստ երեւույթին լավ, շատ լավ փող աշխատող HSBC բանկը, կամ այս տարի լավագույնի մրցանակ ստացած ВТБ բանկը, կամ բոլորովին այլ ոլորտում գործող Pernod Ricard-ը, որ մենաշնորհը ունի «Արարատ» կոնյակի, կամ Coca-Cola-ն, եւ կամ օդանավային եւ այլ ընկերությունները: Կարո՞ղ է նրանց ձախ ձեռքը, հետեւելով Քրիստոսի պատգամին, չգիտի աջն ինչ է անում, հետեւաբար մենք էլ չգիտենք, թե ինչ են անում նրանց... ձեռքերը: Չեմ կարծում: Այլապես նրանք քաջ գիտեն բարձրագոչ պանծացնել իրենց արածներն ու չարածները:

Գիտեմ, բանիմացներն իսկույն պիտի առարկեն եւ մատնացույց անեն մեր խիստ անկատար օրենքները նվիրատվությունների մասին՝ ի տարբերություն առաջադեմ երկրների: Պիտի լինեն նաեւ ուրիշներ, որոնք հիշեցնելու են, որ Հայաստանում պարտաճանաչ հարկ վճարելն անգամ առաքինություն է: Բայց...

Ես այնքան էլ լավ չեմ հասկանում, թե ինչ է նշանակում Ռալֆ Յիրիկյանի սիրած «կորպորատիվ պատասխանատվությունը»: Դա երեւի հենց այն է, ինչը նկատի ուներ Ա. Մանուկյանը՝ պատասխանատվություն, պարտականություն այն երկրի ու ժողովրդի հանդեպ, որտեղ փող ես վաստակում: Եվ պրն. Յիրիկյանը, ավելի ճիշտ՝ նրա ղեկավարած ՎիվաՍել-ՄՏՍ ընկերությունը, միեւնույն անկատար օրենքների պայմաններում, հարկ վճարողների ցուցակում միշտ առաջին տեղերը զբաղեցնելու պայմաններում, ահա արդեն քանի տարի լուրջ, շատ լուրջ բարեգործությամբ է զբաղվում Հայաստանում՝ հատկապես սահմանամերձ բնակավայրերում– բնակարանաշինություն, փողոցային լուսավորում, ՏՏ ոլորտի զարգացում, մշակութային ձեռնարկներ: Նրա օրինակելի օրինակին հետեւում են մի քանի այլ ընկերություններ եւս, ինչպես Grand Holding-ի տերերը՝ հորից որդիներ փոխանցմամբ, առավելապես օգնելով Տավուշի մարզի գյուղացիներին, որտեղից «շինում են իրենց դրամները»:

Նրանք գիտեն իրենց պարտականությունը, որի գիտակցումը իսկապես պակասում է ոչ միայն օտարերկրյա ընկերությունների, այլեւ հայրենական շատ ձեռնարկատերերի մոտ, որոնց, վերջիններիս, անդրադառնալու առիթ կունենամ հաջորդ տարի: Հաստա՛տ:

Մինչ այդ՝ շնորհավոր Նոր տարի եւ Սբ. Ծնունդ:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## Նոր տիկնիկավարներ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Տարվա քաղաքական խմորումները թվածք դարձան վերջին մի քանի օրը: Ոչ մի նոր բան՝ հիմնական սկզբունքից դուրս, այսինքն՝ «Տեսարաններ եւ հաց»-ի՝ միայն տեսարանների մասը գերազանց է տեղի ունենում: Այդ իմաստով օրիգինալ չեն ո՛չ Լեւոն Տեր-Պետրոսյանը, ո՛չ «Յոժ» մականունով սարկաստիկ դերասանի հիմնած եւ կոյուղու բովանդակությամբ հաղավվող անունով կուսակցության հայտածումը, ո՛չ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանի՝ քաղաքականությամբ զբաղվելու ցանկության բարձրաձայնումը (դա նշանակում է, որ նա մի՛շտ է զբաղվել քաղաքականությամբ, այլապես նա կհայտարարեր երկրի պաշտպանության գործն ամրապնդող հասարակական կազմակերպություն ստեղծելու մասին, եւ ոչ թե՝ կուսակցություն), եւ ի վերջո, Ծառուկյանի վերադարձի պլանը ու ՀՀԿ-ում արեւի տակ տեղ ունենալու ներքին հրմշտոցը: Վարչապետի անձն, ինչպես տեսնում ենք, որքան էլ նա ջանա, մնում է երկրորդ պլանում, Իրանի նախագահի՝ Հայաստանի համար անչափ կարեւոր ու Ռուսաստանից կախվածության նվազեցման առումով թքվածնի չափաբաժին պարունակող այցը Հայաստան նախագահ Սարգսյանի առանձնաշնորհն էր, որը, միգուցե, տեսարանները պլանավորողների ծրագրերում ամենեւին երկրորդական պարագա չէ:

Վերադառնանք շաբաթվա թիվ մեկ տեսարանին՝ Տեր-Պետրոսյանի ելույթին: Մեր տպավորությամբ՝ այդ ելույթի ղարաբաղյան կարգավորման վերաբերյալ խաղաղասիրական ուղերձները հնչել են միգուցե երկրում բազեների եւ աղավնիների՝ իրար հավասարակշռող դերաբաժանման արդյունքում, որը ստանձնել են իշխանությունն ու նրան հարմար ընդդիմությունը, զանազան արտաքին ու ներքին պարտադրանքներին ի պատասխան: Այս դերաբաժանմամբ, ղարաբաղյան կարգավորման՝ այսպես կոչված պուտինյան պլանին պետք էր անպայման արձագանքել հավանաբար, այդպիսի պահանջ կա երեւի, ու մտածվել է ամենապրիմիտիվ տարբերակը՝ բազեների դերը բնականաբար ստանձնում է իշխանությունը (չնայած, հենց նրա՛ն է ինչ-որ բան պարտադրվում դրսից), իսկ խաղաղության աղավնիների դերը՝ հարմար ընդդիմությունը, որի ղեկավար Տեր-Պետրոսյանը, խաղաղության իր կոչով, ղարաբաղյան կարգավորման վերաբերյալ ժամանակին թաղված իր փուլային տարբերակը վերակենդանացնելով, արմատական տրամադրված հանրության հարվածը վերցնում է իր վրա փաստորեն: Բնականաբար՝ դրա դիմաց ստանալով այն, ինչ նրան պետք է՝ տեղեր ապագա խորհրդարանում եւ էլի հավանաբար ինչ-որ բաներ: Իսկ ամենագլխավորը՝ հանրության միտքը գոնե որոշ ժամանակ զբաղեցնող տեսարանն ապահովված է, որով նրան շեղում են դժվարագույն ապրելակերպից, փնթփնթոցից, դժգոհության ալիք ձեւավորելուց. բա դե՝ Արցախին սպառնացող վտանգի զգացողության խարույկի վրա բավական մեծ եւ երկար վառվող փայտ նետելով, փոխզիջման ծամոնը ծամելով, էն էլ ապրիլյան պատերազմից հետո, ի՞նչ խնդիր է լուծում Տեր-Պետրոսյանը, բացի իշխանության արմատական կերպարին արմատականության մի նոր շերտի ավելացնելուց:

⇨2

## Հակահայկական «Ռեյչըլ Մեդոու շոու»

ՍԱՌԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Նյու Յորք




Թուրքական լոբբին այս օրերին առիթը բաց չի թողնում Անկարայում ՌԴ դեսպան Անդրեյ Կառլովի սպանության խայտառակ փաստը հանրությանը հակահայկական սկուտեղի վրա ներկայացնելու, «անմեղ գառան» մորթի հագցնելով միշտ Ռուսաստանի «լավը» ցանկացող Էրդողանին ու նրան սպասարկող թիմին: Դրա համար օգտագործվում են ընտրություններում Քլինթոնին աջակցած եւ այժմ պարտության զայրույթից իրենց տեղը չգտնող որոշ լրատվամիջոցներ, որոնց թողարկումներում հարվածի տակ են թվացյալ բոլոր ռուսամետներն ու թրամփամետները:

Ռուս դիվանագետի սպանությունից մեկ օր հետո ԱՄՆ Արեւմտյան ափում հեռարձակվող MSNBC-ի թողարկած «Ռեյչըլ Մեդոու շոու» -ի համապատասխան անունով հաղորդավարը Անկարայում տեղի ունեցած հարձակման եւ Միջին Արեւելքի թեմային նվիրված իր եթերաժամի զգալի մասը նվիրել է նրա բնորոշմամբ՝ «հայ ահաբեկիչներին», որոնք աշխարհի տարբեր երկրներում տասնյակների հասնող թուրք դիվանագետների են սպանել: Մեկնաբան Ռեյչըլն, իրեն լսող անտեղյակ ականջների համար պաթետիկ ոճով ներկայացնում է «հայ ահաբեկիչների» կատարած սպանությունների մասին դետեկտիվ ժանրին հատուկ մանրամասներ, բերում Գրիբոեդովի սպանության մասին անտեղյակ փաստեր, նշում, որ Թուրքիան մի առանձնակի կսկիծով է տանում այս ողբերգությունը, քանզի՝ ինքն է տառապել հայ «ահաբեկիչների» զենքից սպանված իր դիվանագետների կորստից:

⇨2




**Սամանթա Փաուերի երկրորդ հայտնությունը**

էջ 4




**Միշտ մեզ հետ ապրող հավերժի ճամփորդը**

էջ Գ



**Հայաստանյայց Առաքելական եկեղեցին Ավետյաց երկրում**

էջ 8,9

# Հակահայկական «Ռեյչըլ Մեդոու շոու»

➩1 Այս եթերի տեսագրությունը YouTube - ով տարածվեց ամերիկահայ համայնքում եւ բարձրացրեց վրդովմունքի եւ բողոքի մեծ ալիք:

Նշենք նորից, որ այսօր զենքի պես վտանգավոր է դարձել հրահրող, մոլորեցնող, ապատեղեկատվություն սփռող մեդիա քարոզչահենությունը: Այն լուրջ վնասներ կարող է հասցնել մանավանդ մեզ, եթե անտեսենք ու զլանանք հակազդել թուրքազերական լրատվական շանտաժներին, որոնց մեջ ժամանակ առ ժամանակ ներգրավվում են պահ այսպիսի «լրագրող» Ռեյչըլներ: Այս տիկինը, կամ... ոչ տիկինը (նա միասեռական է) իր եթերաժամի ընթացքում մի քանի անգամ գործածեց «հայ ահաբեկիչներ» բառակապակցությունը, ինչը լրագրողի էթիկայի կոպիտ խախտում է հանդիսանում: Նեմեսիս շարժման մեջ ներգրավված հայ վրիժառուները, սկսած՝ Սողոմոն Թեհլիրյանից մինչեւ ԱՍԱԼԱ, բնութագրվել են մեդիա տիրույթում որպես զինյալներ, ոչ՝ ահաբեկիչներ: Ասվածի հավաստիքը «The Washington Post»-ի երեկվա անդրադարձն էր ռուս դիվանագետի սպանությանը, ուր շատ զուսպ հղում կար հայ վրիժառուների մասին, որոնց չէր տրված «ահաբեկիչ» որակավորումը:

Ամերիկայի հայկական համագումարը եւ ԱՄՆ ՀՅԴ Արեւմտյան ափի գրասենյակը անմիջապես արձագանքեցին «Ռեյչըլ Մեդոու շոու»-ի նենգ եւ ապակողմնորոշող եթերային սադրանքին, որոնց իրենց ձայնը միացրեցին հազարավոր ամերիկահայեր: Կազմվեց բողոք-նամակ ուղղված MSNBC հեռուստատեսության գլխավոր գործադիր տնօրենին եւ ղեկավար այլ անձանց: Մեջբերեմ մի քանի տող ԱՀՀ փոխնախագահ **Էնթընի Բարսամյանի** կազմած նամակի բովանդակությունից.

**«Եթե Ռեյչըլ Մեդոուն ցանկանում է ներկայացնել թուրք ահաբեկիչների մասին ամբողջական մի պատմություն, ապա նա պետք է ընդգծի հետեւյալ փաստը՝**

**Թուրքը չէ՞ր Հռոմի պապ Հովհաննես Պողոս Երկրորդի դեմ մահափորձ կատարողը:**

**Թուրքիան չի՞ արդյոք հովանավորում այն մարդասպաններին, որոնք ահաբեկում են այնտեղ ապրող ազգային փոքրամասնություններին, մասնավորապես՝ քրդերին եւ հայերին:**

**Թուրքիայում չի՞ արդյոք սպանվել հայազգի լրագրող Հրանտ Դինքը:**

**Թուրքիան չի՞ իր սահմանները բացել ԻՊ-ի ահաբեկիչների առջեւ:**

**Թուրքիան չի՞ ապօրինի շահույթ ստանում ԻՊ-ի ահաբեկիչներից գնված նավթից»:**

Հայ համայնքի ազդեցիկ այս կազմակերպությունները պահանջում են MSNBC-ի ղեկավարությունից պատասխան ելույթ եւ ներողություն հայ համայնքին ուղղված վիրավորանքի համար: Կարծում ենք, որ հայ համայնքի արդարացի այս բողոքը պետք է պաշտպանվի նաեւ Ամերիկայում ՀՀ դեսպանատան աջակցությամբ:

# Նոր տիկնիկավարներ

➩1 Բացի այդ էլ՝ մարդիկ կբարկանան, կպատասխանեն լրատվամիջոցներով, կզբաղվեն, մինչեւ որ ընտրությունները գան-անցնեն, ռուսներն էլ էդ ընթացքում էնքան խնդիր ունեն, հարցը հո կարգավորման կամ բուն զիջմանը չի՞ հասնի, Մինսկի խումբ կա, բան կա: Ռուսաստանի դեսպանի սպանությունն էլ Անկարայում ոնց որ մերոնց ուղարկված Աստծո պարգեւ՝ռուսթուրքական հերթական կնճիռը հարթելու ջանքով կմոռանան Ղարաբաղն էլ, կարգավորումն էլ, գոնե առժամանակ, մինչեւ մերոնց սահմանադրախառը ընտրանախագիծը լրիվ իրականություն դառնա, հորով-մորով լինի, օրերն էլ տաքանան: Այսինքն՝ տեսարանների հերթական չափաբաժինն այս անգամ (եւ ոչ առաջին անգամ) իր վրա է վերցրել Տեր-Պետրոսյանը:

Սորտեւ մեջբերվող մտքերի մեջ ոչինչ նոր, այս մոտեցումները դեռ 1997-ին են խոստանվել ու դավաճանական համարվել.«Իրականում խնդիրը մեկն է՝ Ղարաբաղի հարցի լուծումը, որից հետո հայթուրքական հարաբերությունները կկարգավորվեն ինքնաբերաբար: Իսկ Ղարաբաղի հարցի լուծման այլ տարբերակ, քան փուլայինը, գոյություն չունի: Այսօր բանակցությունների սեղանին, ըստ էության լավորման մեջ դեր ու հետաքրքրություն ունեցող ռուսների ձեռքը տալ ղարաբաղյան կարգավորման բանալին, ինչպես որ Տեր-Պետրոսյանն է անում, ուրիշ բան, քան ռեւերանս ռուսներին՝ չես անվանի, իսկ դե իշխանությանը դա մատուցված ծառայություն է՝ նախ հերթական անգամ կարգավորման ռուսական պլանի հանդեպ հանրության բացասական վերաբերմունքն ի ցույց դնելու համար, երկրորդ՝ հանրության միտքը զբաղեցնելու եւ իսկական ընդվզում թույլ չտալու, կամ առնվազն այդ ընդվզումը սեփական նպատակներով օգտագործելու տեսակետից:

Բոլոր դեպքերում Հայաստանում տեղի ունեցող ամեն բան, որի անունը քաղաքական է (բայց ոչ բովանդակությունը) տեղավորվում է երկրում նախագահ եղած երեք անձանց ցանկությունների կամ շարժառիթների ծիրում, ընդ որում նախորդ երկու նախագահներն այսօր էլ ներկայացված են տնտեսության ու քաղաքականության մեջ եւ գեներացնող լծակներ ունեն: Նրանք թեմաներ են գեներացնում, կուսակցություններ ստեղծում կամ փոշիացնում, գործընթացներ կառավարում՝ ներկա իշխանության հետ փոխընդմեջ պարտիաներով:

Մարդկանց զբաղեցնող թեմաները պատկերացրեք, թե ինչ տեսակի խցանված կոյուղում կհայտնվենք ազգովին, նախագծողն էլ մեր հետ:

Վերադառնալով Քոչարյանի գեներացնող լծակներին, որի մասին մամուլում արտահոսք եղավ, որ Սեյրան Օհանյանի մուտքը քաղաքականություն եւ ամբողջական օրակարգը համակարգվելու է 2-րդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից, եւ Սեյրան Օհանյանը հանդես է գալու որպես պրոքոչարյանական բոլոր քաղաքական ուժերի միավորման առանցք, որտեղ կլինեն Վարդան Օսկանյանը, Դեմկուսի առաջնորդ Արամ Սարգսյանը, անգամ ՀՀԿ-ից նեղացածները,շարժմանը պետք է միանա նաեւ Վիկտոր Դալլաքյանը: Միգուցե սա իսկապես այդպիսի համախմբմանը խփող արտահոսք է, բայց անձերի առումով ճշմարտանման է, թեեւ երկրորդ նախագահի խոսնակ Վիկտոր Սողոմոնյանը խիստ որակումներով հերքել էր Քոչարյանի մասնակցությունը կամ ուղղորդումը որեւէ ձեռնարկում.«Ակնհայտ է, որ նման «լուրեր» հորինողները, ովքեր, ցավոք սրտի, շարունակում են գործել հասարակական կարծիքի ձեւավորման տիրույթում, ոչ միայն անառողջ երեւակայություն ունեն, այլեւ խորապես ստրկամիտ են: Նրանք ոչ մի կերպ չեն կարողանում հավատալ, որ դրված է կարգավորման փոխզիջումային նույն առաջարկը, ինչ 1997 թվականին, այն է՝ որոշ տարածքների զիջման դիմաց Ղարաբաղին միջազգայնորեն ճանաչված միջանկյալ կարգավիճակ շնորհելու, իսկ վերջնական կարգավիճակի հարցը ապագային թողնելու տարբերակը՝ երաշխավորված ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում խաղաղապահ ուժերի տեղակայմամբ... Իսկ փոխիջման այլընտրանքը պատերազմն է...»: Գոնե հասկանում է Տեր-Պետրոսյանը, որ նույն գետը երկրորդ անգամ մտնելիս ընդհանրապես կարելի է խեղդվել:

Հայաստանի շրջափակումը, այո, խնդիր է , սակայն ելք չգտնելը դեռ չի նշանակում, որ եղած-չեղածը պիտի հանձնենք ու տասնակի ավելի վտանգի մեջ հայտնվենք, քան շրջափակումն է: Ո՞ւմ համար է Տեր-Պետրոսյանի ելույթը, որովհետեւ հայ հանրության մեծ մասը, անգամ իր կուսակիցներից շատերը դեմ են այն տարբերակին, որի անունը փուլային է, ու որի պատճառով Տեր-Պետրոսյանը ժամանակին հանձնեց իշխանությունը: Պատասխանը ծագում է ինքնին՝ նախ ռուսների ու միջազգային այն կենտրոնների, որոնք ուզում են բացել հայ-թուրքական սահմանը՝ իրենց շահերից ելնելով, նրանք էլ տեր կկանգնեն այն ուժին, որը ներկայացնում է Տեր-Պետրոսյանը, կամ, ավելի ստույգ՝ կշարունակեն տեր կանգնել:

Իսկ «Ազգ- բանակ» գաղափարը քարը քարին չթողնելու մասով ասենք, որ խաղաղություն մուրալու փոխարեն՝ այն պարտադրում են ուժեղ բանակով, Շվեյցարիայի հետ համեմատվելու ոչ մի եզր էլ անգամ չկա, պատմական անդրադարձն այդ առումով կտրված է համատեքստից, իսկ թե ինչ խնդրի լուծմանն է կոչված մե՛ր, հայկական «Ազգ-բանակ» գաղափարը, այդ հարցին պատասխանել են ապրիլյան պատերազմում ընկած մեր տղաները՝ իրենց կյանքը զոհելով: Ազգային արժեքի անխոնա թալանի հետ էլ համաձայն ենք, սակայն այն չի հասնի նրան, ինչ արվեց հենց Տեր-Պետրոսյանի օրոք, երբ ազգային հարստությանը տիրացան մի քանի «պոլի փես»:

Խորքային առումով չի կարելի չնշել, որ, այնուամենայնիվ, այդպես էլ իշխանություն վերադառնալու կամ իշխանությունը պահելու հույսը չկտրած զորաշարժերն են հիմնականում այն շարժառիթը, որը ստեղծում է աղավնիների ու բազեների թվացյալ երկատված, իրականում կուռ միասնությունը, քանզի Հայաստանի իշխանության ձեւ կարծես թե սպառվել էին՝ ապրիլյան պատերազմը կամա՞ց մոռացվում է, «Սասնա ծռերի« վերաբերյալ մարդիկ այդպես էլ միասնական կարծիքի չեկան, թե ով է կանգնած նրանց հետեւում (իսկ որ կանգնած էին՝ ողջամիտ մարդիկ չեն կասկածում, միայն էպոսագետի եւ էպոսի հերոսների նմանությունն արդեն ինչ-որ բան հուշում է), ու զինված տղերքի դատերն էլ մի քանի՝ իրենց գործին նվիրված լրագրողներից բացի՝ հանրությանը կարծես չեն հետաքրքրում: Կրեատիվ, էֆեկլյուզիվ, երեւակայությունը խթանող, շամփրող, գլխին բամփող նոր գաղափարներ են պետք վերեւներին, ինչպես, ահա՛, «Քաղաքացիական ակտիվ քայլ» անվանվանյալ, կոյուղու բովանդակությանը համարժեք հապավմամբ մի կուսակցության ի հայս գալը, որն իրեն անվանում է իշխանական, ծրագրերով ակնարկ ունի ողջ քաղաքական դաշտին կոյուղային բովանդակություն հաղորդելու կամ ցույց տալու, որ խփել է տասին՝ քաղաքական դաշտն ամբողջովին անլրջացնելու առումով, ասես թե իշխանությունը դա վաղուց չէր արել:

Ժամանակին, ճիշտ է, նախագահական ընտրություններին, էլի մի խեղկատակ էին մեջտեղ գցել, ինչ- որ էպոսագետ, հետո նա խաղը լուրջ ընդունեց, կամ, ով գիտե, միգուցե տանուլ տվեց, քանի որ Պարույր Հայրիկյանը չմեռավ ու նախագահական ընտրությունները չհետաձգվեցին, այդ պատճառով նա իր կյանքի մնացած լավագույն մասն անցկացնում է հասարակությունից մեկուսի, սեփական գլխից վեր-վեր թռնելու ու գծված ծրագրում չտեղավորվելու համար: Այս անգամ իսկական խեղկատակ են մեջտեղ գցել, քանի որ քաղաքական կրկեսը կարծես ավարտվել է՝ առանց մեծ արդյունք տալու, իսկ մինչեւ ընտրությունները դեռ ժամանակ կա, ինչով պետք է զբաղվի հանրության միտքը, ով պետք է խանգարի թագավոր ախպոր՝ հարկավոր, բայց չափի մեջ պահելու անհրաժեշտություն պահանջող ձեռնարկին, երբ դա պետք լինի: Իհարկե, եթե նախագծի հեղինակը իր նախագիծն այնքան վիրտուոզ է նախագծել, որ ընթացքում հարմար պահին ջուրն ուժեղ է քաշելու, ու կոյուղին մաքրվելու է՝ հա, սակայն եթե այդ նախագիծը, ինչպես ռուսներն են ասում, «զբոյ տա», ու հանրության փող չվերցնող, բայց ապրուստից, արհամարհանքից ու տգիտությունից կատաղած հատվածը, մյուսների ջգրու, վերցնի ու ձայնը տա ֆլեքսերիկի վերջին համար ՔԱՔ-ին, մեծ ճանապարհ անցած մարդիկ կարող են առաջնորդվել բացառապես սեփական որոշումներով», ասել էր նա: Ընդ որում՝ անհայտ մնաց, թե մեծ ճանապարհը միայն Ռ. Քոչարյանն է անցել, թե՞ դա հավասարապես վերաբերում է նաեւ Ս. Օհայանին:

Դե իսկ Սեյրան Օհանյանին, նրա հետ համագործակցել ցանկացող Վիկտոր Դալլաքյանին եւ մյուսներին, որոնք անշուշտ, իհարկե, անտարակույս, անպայման, միանշանակ քաղաքականությամբ զբաղվելու իրենց սահմանադրական իրավունքն ունեն, «հայրենիքին ծառայելու» ա՛յս կերպն ընտրելով, հիշեցնենք, որ սովորական մարդիկ էլ իրենց սահմանադրական իրավունքն ունեն հավ չլինելու, հիշելու ամեն ինչ ու բոլորին, բոլորի արածներն ու ասածները:

Իսկ որ Ս. Օհանյանն ասում է, թե՝ մեզ սպասվում են ոչ թե սովորական ընտրություններ, այլ ընտրություններ, որոնք իրենց կարեւորությամբ հավասարազոր են մինչ այժմ տեղի ունեցած նախագահական ընտրություններին, համաձայն ենք, երկրի ապագա ղեկավարի, լիդերի հարցը խորհրդարանական ընտրություններին է լուծվելու, ու դուք բոլորդ պայքարելու եք միայն դրա համար, իսկ հայրենիք փրկելը, ժողովրդի կողքին լինելը, ներեցեք..., նախ հարցնեիք ժողովրդին, ինքն ուզո՞ւմ է, որ իր կողքին լինեք, հետո միայն ժողովրդի անունը տվեք: Լավագույն ցանկություններու:

Իսկ մենք, տեսարանների մտական, ճիշտ է՝ փոքրածառու հանդիսատեսներս, մնանք վիրտուոզ ներկայացումների սպասումով՝ խաղը մերը, հասարակ քաղաքացիներինս չէ, որ մեր ճկույթաչափ աշխատավարձերով դիտորդի դերն ենք ստանձնել, խաղը միլիարդատերերի միջեւ է, մեզ համար այնտեղ դեր չկա: Խաղն արժե մոմերը, ու մեզ մնում է հետեւել՝ չբացառելով տեսնել Ծառուկյանի եւ Հայրիկյանի հետ պատահածներից էլ ավելի թունդ տեսարաններ: Ինչ արած, մեզ մնում է պահպանել անհրաժեշտ առողջ ցինիզմը՝ տիկնիկավարների կազմակերպած խաղի նորանոր աղմկոտ տեսարաններին հետեւելիս:

Այնպես որ, հարգելի հանդիսատեսներ, հարմար տեղեր գրավեք պարտերում, անգամ՝ ամֆիթատրոնում, որտեղից որ լավ կերեւա խաղը. հայտերը ներկայացված են, հունվարի առաջին տասնօրյակից հետո կսկսվեն ներկայացումները այս նոր, լավ կազմակերպված եւ տեսարժան թատրական եռամսյա փառատոնում:

AZG NEW SHABAT 1.QXD 22/12/2016 21:57 Page 3



# Անցնող 2016-ը՝ ցածր տնտեսական աճ, բարձր տեմպով աճող արդյունաբերություն

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Գաղտնիք ասած չենք լինի, եթե նշենք, որ 2016-ի տնտեսական տարին նույնպես մեզ համար բարդ էր եւ անկանխատեսելի: Անշուշտ, համաշխարհային քաղաքական եւ տնտեսական կացությունն իր հետքն է թողնում նաեւ Հայաստանի տնտեսության վրա, որոնցից գլխավորը՝ սպառման ծավալների նվազումն էր անցյալ եւ այս տարիների ընթացքում: Նավթի աննախադեպ ցածր գները բացասաբար ազդեցին մեր հիմնական տնտեսական գործընկեր երկրի՝ Ռուսաստանի տնտեսության վրա, որտեղ այս տարի կգրանցվի թեկուզ չնչին, բայց տնտեսական անկում: Դեռ 2015-ից սկսած Ռուսաստանի տնտեսության այս կացությունը իր անմիջական ազդեցությունն ունեցավ Հայաստանի վրա: Այդ երկրից դեպի Հայաստան հարազատներին ուղղված մասնավոր փոխանցումների ծավալները կտրուկ նվազեցին: Նվազեցին նաեւ դեպի Ռուսաստան հայկական ապրանքների արտահանման ծավալները: Բարեբախտաբար, 2016-ին արդեն արտահանման ծավալները դեպի Ռուսաստան ոչ միայն վերականգնվեցին, այլեւ կտրուկ աճեցին: Մինչդեռ, մասնավոր դրամական փոխանցումների ծավալները շարունակեցին մնալ ցածր, ինչին ի լրումն էլ ավելացավ հակառակ՝ Հայաստանից Ռուսաստան դրամական փոխանցումների արտահոսքը:

Այս տարի արձանագրված մյուս բացասական գործոնը մետաղների միջազգային ցածր գներն էին, ինչը հնարավորություն չէր տալիս մեր՝ հիմնականում պղնձաքարի արդյունահանմամբ զբաղվող հանքարդյունաբերությանը ավելացնել արտահանման ծավալները: Տարվա առաջին 10 ամիսներին պղնձի միջազգային գները գտնվում էին 1 տոննայի դիմաց 4700-4800 դոլարի սահմաններում: Միայն նոյեմբերից սկսած պղնձի գինը որոշակիորեն բարձրացավ, կազմելով 1 տոննայի դիմաց 5700-5800 դոլար: Առաջիկայում դա որոշ չափով կբարելավի այս ոլորտում գործող հայկական խոշոր պղնձարդյունաբերական կոմբինատների գործունեությունը:

Ամեն դեպքում, հենց այս տարի սկսվեց Հայաստանում եւս մեկ խոշոր հանքարդյունաբերական՝ Ամուլսարի ոսկու հանքի մոտ 370 մլն դոլար արժողությամբ ներդրումային ծրագիրը: Երկար ժամանակ բնապահպանական մտահոգություններ առաջացնող այս ծրագիրը ակնկալվում է, որ Վայոց Ձորի տարածաշրջանում, սկզբնական շրջանում 1300 նոր աշխատատեղեր կապահովի, իսկ ներդրումների 5 տարիների ընթացքում՝ մոտ 700 մշտական աշխատատեղեր: Ներդրողները վստահեցնում են, որ բնապահպանական խնդիրները լուծվել են միջազգային ներկա չափանիշներով՝ բոլոր պահանջների բավարարմամբ: Անցնող տարվա ընթացքում սա Հայաստանում իրականացված թերեւս ամենանշանակալի ներդրումային ծրագիրն էր: Հարկ է նաեւ նշել, որ հակառակ հանքարդյունաբերության ոլորտում արձանագրված որոշակի անկմանը, Հայաստանի արդյունաբերության համար անցնող տարին, ընդհանուր առմամբ, առաջընթացի տարի կարելի է համարել:

## Արդյունաբերությունը լավատեսություն է ներշնչում

Արդյունաբերական արտադրանքի աճը ներկա պահին՝ 11 ամիսների արդյունքով կազմել է 6,8 տոկոս, իսկ գումարային առումով՝ 1 տրլն 285 մլրդ դրամ: Հատկանշական է, որ սկսած 2010-ից, արդյունաբերությունը Հայաստանում բարձր տեմպերով աճ է արձանագրում: Հետճգնաժամային առաջին տարում՝ 2010-ին, այդ աճը կազմել է 9,7 տոկոս, 2011-ին՝ 13,9 տոկոս, 2012-ին՝ 8,8 տոկոս, 2013-ին՝ 6,9 տոկոս, 2014-ին՝ 2,7 տոկոս, 2015-ին՝ 5,2 տոկոս եւ, ինչպես արդեն նշվեց, այս տարվա արդյունքներով՝ առայժմ 6,8 տոկոս: Այսինքն, վերջին 7 տարում, ներառյալ այս տարին, Հայաստանի արդյունաբերությունն աճել է 54 տոկոսով, ինչն անշուշտ բարձր ցուցանիշ է եւ ինչին հասնելը դյուրին չի եղել: Գումարային առումով, դրամային արտահայտությամբ, 7 տարի առաջվա համեմատ, արդյունաբերական արտադրանքի ծավալները ավելի քան կրկնապատկվել են: Հարկ է նշել, որ մի քանի տասնյակ ներդրումային ծրագրերին տրված հարկային արտոնությունները (ավելացված արժեքի հարկի հետաձգում երեք տարով) վերջին 5 -6 տարիներին իրենց անմիջական ազդեցությունն  են թողել արդյունաբերության աճի ցուցանիշների վրա: Այդուհանդերձ, ասել, թե Հայաստանը նորից արդյունաբերական երկիր է, դեռ վաղ է, բայց գործընթացը լավատեսական հույսեր է ներշնչում:

Անցնող տարվա առումով հատկապես կարեւոր է մշակող արդյունաբերության ճյուղերում գրանցվող լրջագույն աճը: Արժե հիշատակել պատրաստի սննդի, ծխախոտի, ոսկերչական իրերի, սարքերի, ապարատների, մեքենասարքավորումների եւ մեխանիզմների, թեթեւ արդյունաբերության արտադրության եւ արտահանման ծավալների՝ երբեմն բավականին կտրուկ ավելացումը:




## Արտահանման ռեկորդային ցուցանիշ այս տարի

Տնտեսության իրական հատվածի՝ արդյունաբերության եւ գյուղատնտեսության համար աճի լուրջ խթան կարող է դառնալ գազի տարբերակված, ավելի ցածր սակագները վերամշակող ձեռնարկությունների եւ ջերմոցային տնտեսությունների համար: Այդ դեպքում հայկական ապրանքները ավելի մրցունակ կդառնան թե՛ ներքին շուկայում, թե՛ արտաքին, հետեւաբար, տեղական արտադրանքի մասնաբաժինը կավելանա ներքին շուկայում, իսկ արտահանվող ապրանքն ավելի մրցունակ կլինի արտերկրում:

Ընդհանուր առմամբ, այս տարվա 11 ամիսներին Հայաստանից արտահանման աճը ռեկորդային է եղել՝ 21,2 տոկոս: Եվ սա՝ չնայած մեր արտահանման խոշոր ճյուղերից մեկի համար բացասական ազդեցություն ունեցող մետաղների միջազգային գների նվազման: 2016-ի արտահանման ծավալների նման աճը, անցնող տարվա թերեւս ամենակարեւոր տնտեսական ձեռքբերումն է եւ հարկ է ջանքեր գործադրել, որպեսզի այդ տեմպը որքան հնարավոր է երկար պահպանվի:

Արտահանման ուղղվածության համար նպաստավոր պայման է Հայաստանի անդամակցումը Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ) , որի հնարավորություններից առայժմ քիչ ենք օգտվում: Այս տարվա ընթացքում հաստատվեց Մեղրու տարածքում ազատ տնտեսական գոտու ստեղծման որոշումը, որը միմյանց կկապի ԵՏՄ եւ Իրանի շուկաները: Այս նախագիծը լուրջ տնտեսական շահաբաժիններ է խոստանում ինչպես Սյունիքի տարածաշրջանի, այնպես էլ Հայաստանի համար ընդհանրապես:

## Ի՞նչը չհաջողվեց եւ մնաց 2017-ին

Իրական տնտեսության մյուս հատվածում՝ գյուղատնտեսությունում, այս տարի գործերն այնքան հաջող չէին, որքան անցյալ տարի, երբ բարձր բերքատվություն էր արձանագրվել: Մյուս կողմից էլ, գյուղատնտեսությունում այս պահի դրությամբ արձանագրված մոտ 6 տոկոս անկումը պայմանավորված է վիճակագրության ավելի իրատեսական ցուցանիշներ ունենալու նոր վարչապետ Կարեն Կարապետյանի պահանջով: Հայտնի է, որ գյուղատնտեսության ոլորտում արձանագրվող ցուցանիշները մշտապես վիճելի են համարվել, քանի որ դրանք ներկայացվում են գյուղապետարանների կողմից եւ դրանց օբյեկտիվությունը մշտապես կասկածելի է եղել: Ենթադրելի է, որ այս տարվա տվյալները առավել հավաստի են, ինչն ազդել է գյուղատնտեսության եւ նրա միջոցով նաեւ տնտեսական ընդհանուր աճի ցուցանիշի վրա:

Տնտեսական ակտիվության աճը Հայաստանում այս տարի նվազող տեմպ է արձանագրել: Տարեսկզբին այն սկսվեց բարձր տեմպով, եղավ պահ, երբ հասավ մինչեւ 6 տոկոսի, բայց հունվար-հոկտեմբեր ամիսներին այն արդեն կազմում էր 0,4 տոկոս, իսկ հունվար-նոյեմբերի տվյալներով՝ փոքր-ինչ բարձր՝ 0,6 տոկոս: Ակնհայտ է, որ տնտեսական աճի տարեկան ցուցանիշը կգտնվի 0,5-1 տոկոսի միջակայքում, ինչը ոչ մի կերպ բավարար չի կարելի համարել:

Արձանագրելով արդյունաբերությունում արձանագրվող աճի միտումը, ինչպես նաեւ կառավարության կողմից նոր ներդրումային ծրագրերին աջակցելու պատրաստակամությունն ու նոր ներդրումներ ներգրավելու ուղղությամբ ջանքերը, անհրաժեշտ է, որպեսզի 2017-ին այդ ջանքերն արդեն արդյունքներ գրանցեն թե՛ արդյունաբերության, թե՛ գյուղատնտեսության, թե՛ շինարարության եւ թե ծառայությունների ոլորտներում: Ցանկալի կլինի գոնե այս տարի վերջապես սկսվեին իրագործվել հետաձգվող խոշոր քաղաքաշինական ծրագրերը՝ «Հին Երեւանն» ու «33-րդ թաղամասը», ինչը անպայման իր ազդեցությունը կթողներ ինչպես շինարարության ոլորտի, այնպես էլ ընդհանուր տնտեսական աճի վրա:

## Գրեթե կրկնակի շատ իրանցի զբոսաշրջիկներ են եկել Հայաստան

Տնտեսության մեջ մեծ աճ արձանագրած մյուս ճյուղը ծառայություններն են: Այս ոլորտում, ինչպես եւ մանրածախ առեւտրում, աճը սովորաբար ավելի շուտ արդյունք է լինում արտերկրից մասնավոր փոխանցումների ծավալների ավելացման, քան երկրի տնտեսության իրական հատվածում տեղի ունեցող առաջընթացի: Սակայն, այս տարի, մասնավոր փոխանցումների ծավալի նվազմամբ հանդերձ, մանրածախ առեւտրի ծավալները գրեթե անփոփոխ են մնացել, իսկ ծառայություններում արձանագրվել է ամենաբարձր աճը՝ 7,8 տոկոս հունվար-նոյեմբերի ժամանակահատվածում: Ծառայությունների ոլորտում աճը նշանակում է, որ ավելացել է այդ ծառայություններից օգտվողների թիվը, այսինքն, այն կենսամակարդակի որոշակի փոփոխության արտացոլում է: Եթե մասնավոր փոխանցումները նվազել են, իսկ ծառայություններում աճ է արձանագրվել, ապա դա հետեւանք է՝ մի կողմից արդյունաբերության եւ գյուղատնտեսության մեջ արձանագրված դրական տեղաշարժերի, մյուս կողմից՝ Հայաստան արտարժույթ բերող ծառայությունների ծավալների ավելացման: Խոսքը զբոսաշրջության մասին է:

Որքան էլ անբարենպաստ եղավ այս տարին՝ պայմանավորված ապրիլյան պատերազմով եւ հատկապես հուլիսյան ահաբեկչական զինված ելույթով, Հայաստան եկող զբոսաշրջիկների թիվը ավելացավ՝ 9 ամիսների արդյունքով 3,6 տոկոսով: Ընդ որում, զբոսաշրջիկների ընդհանուր թվի աճով առաջին հերթին պարտական ենք Իրանից Հայաստան եկող զբոսաշրջիկների կտրուկ՝ 87,4 տոկոս աճին: Մյուս երկրներից Հայաստան եկողների աճը կա՛մ փոքր է եղել, կա՛մ ընդհանրապես չի եղել: Ընդհանուր առմամբ, բացի Հայաստանի գրավչության ավելացման ուղղությամբ քայլերը շարունակելուց, նախեւառաջ պետք է բացառվեն ներքին բախումները: Հակառակ դեպքում, ամբողջ ջանքերը պարզապես իզուր կդառնան:

## Ցածր գնաճի տարի

Անցյալ տարին նույն Հայաստանում գնաճ չարձանագրվեց: Նոյեմբերին նախորդ տարվա նոյեմբերի համեմատ արձանագրվել էր գնանկում՝ 0,6 տոկոսով՝ հիմք ընդունելով 470 ապրանքների եւ ծառայությունների գների դինամիկան: Նվազել են պարենային ապրանքների գները՝ 0,5 տոկոսով, ոչ պարենային ապրանքների գները՝ 3,5 տոկոսով: Ծառայությունների սակագներն են միայն անցյալ տարվա նոյեմբերի համեմատ արձանագրել 1,1 տոկոս աճ: Լա՞վ է սա, թե՞ վատ:

Սոցիալական առումով գնանկումը գուցե եւ լավ է, քանի որ չի վատթարացնում անապահով խավի վիճակը, բայց այն նաեւ ցուցիչ է պահանջարկի նվազման եւ մտահոգիչ գործոն՝ տնտեսության զարգացման համար: Գնանկումային միջավայրը կարող է բերել ներդրումային առանց այն էլ պասիվ վիճակի խորացման, դրանից բխող տնտեսական նվազման երեւույթով: Հետեւաբար, թե՛ կառավարությունը, թե՛ Կենտրոնական բանկը պետք է խթանողական քաղաքականությանը առաջնայնություն տան, քանի որ գնաճի զսպման խնդիր վերջին երկու տարիներին Հայաստանում ըստ էության չկա: Այս ուղղությամբ ԿԲ կողմից վարվող քաղաքականություն թեեւ տարվում է՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքների իջեցման տեսքով, բայց՝ շատ զգուշավոր:

**Ընդհանրապես, մեր երկրի տնտեսությունն այժմ հասել է զարգացման մի փուլի, որին պետք է հաջորդի նոր խթան: Մասնագիտական գնահատականներով, Հայաստանի տնտեսական զարգացման նոր որակական փուլի համար առաջիկա տարիներին մեզ առնվազն 6-8 տոկոս միջին տարեկան տնտեսական աճ է անհրաժեշտ: Հուսանք, որ 2017-ը կդառնա նման աճ արձանագրած տարիներից առաջինը:**

AZG NEW SHABAT 1.QXD 22/12/2016 21:57 Page 4



# Սամանթա Փաուերի երկրորդ հայտնությունը

**ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ**

Դետրոյթ, ԱՄՆ

Նա, ով ցանկանում է ծիծաղի առարկա չդառնալ, պետք է խուսափի բարոյականություն փնտրելուց քաղաքականությունում եւ քաղաքագետների շրջանում: Մի օր Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինն ու իր թուրք գործընկեր Ռեջեփ Թայիփ Էրդողանը իրար կոկորդ են կրծում, հաջորդ օրը Էրդողանը Մոսկվա է ժամանում, քծնում եւ արդյունքում ամեն ինչ իր տեղն է ընկնում: Ռուս-թուրքական հարաբերությունները վերականգնվում են:

Տարօրինակ իրադարձություններ եւ փոփոխամտություններ տեղի ունեցան նաեւ Մ. Նահանգներում վերջերս կայացած նախագահական ընտրությունների ընթացքում եւ դրանցից հետո: Դոնալդ Թրամփի ամենակատաղի քննադատներից մեկը, նախագահական նախկին թեկնածու Միթ Ռոմնին հանդիպեց նորընտիր նախագահին, շնորհավորեց նրան եւ խնդրեց, որ իրեն էլ ընդգրկի առաջիկայում ձեւավորվելիք կառավարության կազմում: Նմանապես ներկայացուցիչների պալատի խոսնակ Պոլ Ռայանը, որ Ռոմնիից հետ չէր մնում Թրամփի հասցեին ուղղված իր արհամարհական ակնարկներով, հանկարծ շուռ եկավ վերջինիս հաղթանակից հետո եւ հայտարարեց, որ Թրամփը «լսել էր մի ձայն, որ նրանից առաջ ոչ ոք չէր լսել»:

Երբ կարեւոր պետական գործիչներ նման անողնաշար շրջադարձեր կատարեն քաղաքականության մեջ, նրանք անկասկած ճանապարհ կհարթեն ավելի ցածր էշելոններում գործող դիվանագետներին վարպետանալու մտքափոխության այդ ասպարեզում:

Դյուրաթեք սկզբունքայնության տեր մարդկանց թվին է պատկանում նաեւ ՄԱԿ-ում Մ. Նահանգների ներկայացուցիչ Սամանթա Փաուերը: Նա խորիմաց գիտնական է Հարվարդ եւ Եյլ համալսարաններից ստացած իր գիտական աստիճաններով, որ ժամանակին Բարաք Օբամայի եւ ամերիկահայ համայնքի ուշադրությանն արժանացավ հրատարակելով «Խնդիրը` դժոխքից: Ամերիկան ցեղասպանության դարաշրջանում»: (A Problem from Hell: America in the Age of Genocide) խորագրով հատորը, որը կարեւոր ներդրում է մեր օրերի Ցեղասպանության խնդրի ուսումնասիրության ոլորտում: Գրքում հրեական ողջակիզման, ռուանդայական եւ կամբոջական ցեղասպանությունների շարքում պատշաճ տեղ է հատկացված նաեւ Հայոց ցեղասպանությանը: Նա դրանով մեծ հաջողության հասավ եւ ստացավ Պուլիցերյան մրցանակ: 2004-ին «Թայմ» պարբերականը նրան ընդգրկեց աշխարհի 100 հզորագույն կանանց շարքը, իսկ «Ֆորբս» պարբերականը նրան 41-րդը դասեց աշխարհի ամենաազդեցիկ կանանց ցուցակում:

Փաուերը մինչեւ 2008-ի մարտ ամիսը, այդ ժամանակ դեռ սենատոր Օբամայի ավագ խորհրդատուն էր, մինչեւ որ ստիպված եղավ հրաժարական տալ եւ չմասնակցել Օբամայի նախագահական ընտրարշավին այն բանից հետո, երբ Հիլարի Քլինթոնին նա անվանեց «հրեշ»: Դա հայտնի դարձավ «Սքոթսման» (Scotsman) պարբերականի հրապարակումից: Հետո նա ներողություն խնդրեց, ասելով որ այդ խոսքը «չի արտահայտում իմ զգացմունքները սենատոր Քլինթոնի հանդեպ, որի առաջնորդի կարողություններն ու հասարակական ծառայությունները ինձ հիացրել են միշտ: Իհարկե ես ափսոսում եմ: Չեմ հավատում, թե այդ եւ նման բառերը ինչպես դուրս եկան իմ բերնից»:

Ներողութան խոսքերը նրան դարձյալ վերադարձրին Օբամայի ճամբար, որտեղ նա զբաղեցրեց նրա վարչակազմի արտաքին քաղաքականության «գլխավոր ճարտարապետի» պաշտոնը: Մինչ նա BBC-ի «Hard Talk» (Դժվար խոսակցություն) ծրագրին տված հարցազրույցի ժամանակ Իրաքից ամերիկյան զորքերը 16 ամսվա ընթացքում դուրս բերելու Օբամայի անկատար մնացած խոստումն էր պաշտպանում, հաղորդավարը նրան հիշեցրեց, որ նրա խոսքերը հակասում են ընտրապայքարի օրերին Օբամայի ստանձնած պարտավորություններին: Փաուերը իրեն չկորցնելով հակադարձեց. «Դուք չեք կարող 2008-ի մարտին պարտավորություններ ստանձնել այն մասին, թե ինչ է տեղի ունենալու կամ հանգամանքներն ինչպիսին կլինեն 2009-ի հունվարին»: Դա գուցե առաջին նախանշանն էր, որ փոփոխամտությունը Սամանթա Փաուերի որդեգրած քաղաքականության անբաժանելի մասնիկն էր:

Նույնանման մի միջադեպ էլ տեղի ունեցավ 2002-ին Հարրի Քրիսլերի «Conversations with History» (Զրույցներ պատմության հետ) հաղորդման կապակցությամբ: Որոշ անհասներ Փաուերին մեղադրեցին այդ հարցազրույցի ժամանակ Իսրայելի դեմ կատարած արտահայտությունների համար: Այս անգամ էլ նա ներողություն խնդրեց եւ լաց եղավ հրապարակայնորեն, ապա սկսեց պաշտպանել Իսրայելի գործողությունները Գազայի շրջանում, որտեղ երկու շաբաթների ընթացքում 1,200 պաղեստինցիներ էին կոտորվել: Նա կողմ արտահայտվեց Իսրայելի իրեն պաշտպանելու իրավունքին, եւ իհարկե արժանացավ իսրայելական քարոզչական կազմակերպությունների բարձր գնահատանքներին:

ՄԱԿ-ում Մ. Նահանգների ներկայացուցիչը դառնալու թեկնածության ժամանակ, նա աջակցություն ստացավ դիվանագետ Դենիս Ռոսից, հակազրպարտչական լիգայի ղեկավար Աբրահամ Ֆոքսմանից, Մ. Նահանգներում Իսրայելի դեսպան Մայքլ Օրենից, Ալան Դերշովիցից եւ ռաբբիների ասամբլեայի նախագահ Հենրի Սպիկերից:

Սամանթա Փաուերի սիրո եւ ատելության հարաբերությունները հայերի հետ սկսվեցին ցեղասպանությունների մասին իր գրած վերոնշյալ հատորի լույս ընծայմամբ: Հազվադեպ երեւույթ էր, որ օտար մի գիտնական կամ դիվանագետ այդքան պարզորոշ կերպով բնութագրեր Հայոց ցեղասպանությունը եւ բացահայտեր նրա ճանաչման գործընթացի դեմ իրականացվող ժխտման մեխանիզմները:

Եվ ամենակարեւորը, Օբամայի նախագահական ընտրարշավի ժամանակ նա ամերիկահայ համայնքին մոտեցավ որպես նրա քաղաքականության ավագ խորհրդականի եւ թեկնածուին ներկայացրեց որպես պատմության գիտակի` տեսաժապավենի միջոցով վստահեցնելով, որ «նրան կարելի է վստահել»:

Ամերիկահայ համայնքն էլ հիմնվելով նրա գրքի եւ Օբամայի նախկինում արտահայտած մտքերի վրա քվեարկեց վերջինիս օգտին: Դեռ սենատոր եղած ժամանակ Օբաման նշել էր, որ ինքը հաստատ համոզված է, որ «Հայոց ցեղասպանության խնդիրը անհիմն պնդումների, անձնական տեսակետի կամ կարծիքի արդյունք չէ, այլ պատմական փաստաթղթերով լայնորեն վավերացված փաստ: Որպես սենատոր ես ամբողջովին պաշտպանում եմ Հայոց ցեղասպանության վերաբերյալ «HR 106 եւ S Resolution 106» բանաձեւի անցկացումը կոնգրեսում եւ նախագահ ընտրվելու դեպքում ես կճանաչեմ Հայոց ցեղասպանությունը»:




Այս եւ նման արտահայտություններն ու խոստումները նշանակալի թվով հայերի քվեներն ապահովեցին Օբամային, ով ընտրվելուց հետո դրժեց իր խոստումը եւ հուսախաբ արեց հայ համայնքին: Ութ տարի շարունակ, Օբաման դիտումնավոր խուսափեց «ցեղասպանություն» եզրից: Բայց արդար լինելու համար պետք է նշել, որ Թուրքիայի խորհրդարանում ելույթ ունենալով նա ակնարկեց, որ այդ երկիրը պարտավոր է առերեսվել իր մութ անցյալի հետ:

Համապատասխան եզրը չօգտագործելու այս ութ տարիների ընթացքում հայկական համայնքի համար դժվար էր կապ հաստատել Փաուերի հետ: Մամուլի եւ անձնական կոչերը անպատասխան էին մնում: Բայց նա հանկարծ հայտնվեց անցյալ տարվա մայիսին փոխնախագահ Ջո Բայդենի կողքին Վաշինգտոնի ազգային մայր տաճարում Հայոց ցեղասպանության հարյուրամյակի հիշատակության առթիվ:

Նախագահ Օբաման 2012-ին նրան նշանակել էր «Դաժանությունների կանխարգելման վարչության» (Atrocities Prevention Board) նորաստեղծ կառույցի նախագահ: Հակադրվելով այդ վարչության առաքելությանը, եւ մարդկային իրավիճակների հանդեպ իր վերաբերմունքից անկախ, Փաուերը, Ազգային անվտանգության խորհրդատու Սյուզան Ռայսի ընկերակցությամբ կողմ արտահայտվեց Լիբիայի նվաճմանը եւ այնտեղ կատարվող վայրագություններին (ներառյալ երկրի նախագահի բարբարոսական սպանությանը), որոնք գործնականորեն խորտակեցին այդ երկիրը:

Փաուերի օրերս կայացած երկրորդ հայտնությունը շատ ավելի հետաքրքրական է:

Վաշինգտոնի Ողջակիզման թանգարանում կայացած գրող, հասարակական գործիչ եւ փիլիսոփա, ողջակիզումից մազապուրծ` ողբացյալ Էլի Վիզելի թաղման արարողության ժամանակ խոսելով եւ օրինակներ բերելով Վիզելի հետ ողջակիզման տարիների ընթացքում կատարված անարդարությունների վերաբերյալ, Փաուերը դիտավորյալ, թե ոչ դիտավորյալ կերպով նշեց նաեւ Հայոց ցեղասպանության ժխտման մասին:

Հաշվի առնելով, որ նա դեռեւս զբաղեցնում է պաշտոնական դիրք եւ կառավարական կարեւոր պաշտոն, ՄԱԿ-ում նրա արտասանած խոսքերը չեն կարող անձնական կարծիքից ավելի մեծ նշանակություն ունենալ: Հիշենք, թե ինչ տեղի ունեցավ դեսպան Ջոն Էվանսի հետ, երբ պետքարտուղարությունը նրան պաշտոնազրկեց «ցեղասպանություն» եզրը օգտագործելու համար:

Փաուերը դեռեւս Մ. Նահանգների դեսպանն է ՄԱԿ-ում: Գուցե նա իր խի՞ղճն է մաքրում, կամ թողությո՞ւն հայցում Օբամայի վարչակազմի մեղքերի համար:

Նրա ակնարկները քննարկման առարկա դարձան պետքարտուղարության վերջերս կայացած բրիֆինգի ժամանակ, երբ փոխխոսնակ Մարկ Թոներին հարց տվեցին, թե արդյոք Հայոց ցեղասպանության հարցում որեւէ փոփոխություն կա վարչակազմի քաղաքականության մեջ, նա պատասխանեց, որ «Փաուերի ակնարկները ոչ մի փոփոխություն չեն արտահայտում վարչակազմի քաղաքականության մեջ»:

«Պատասխանելով ձեր հարցին, ավելացրեց նա, նայեք այս նախագահին, այս վարչակազմին, որը ինչպես նախորդ վարչակազմերը, անընդհատ... ճանաչել է, որ 1,5 միլիոն հայեր կոտորվել են եւ տարագրվել դեպի մահ Օսմանյան կայսրության վերջին օրերի ընթացքում: Մենք նաեւ կոչ ենք արել, որ անկեղծորեն եւ ամբողջական կերպով ճանաչվեն զանգվածային մահվան փաստերը: Սա եղել եւ մնում է մեր քաղաքականությունը: Ես չեմ ցանկանում խորանալ եզրույթների մեջ»:

Եզրույթներն, իհարկե, կարեւոր են: «Ցեղասպանություն» եզրույթն է միայն, որ իրավական նշանակություն ունի եւ գործնական հետեւանքներ, ոչ թե խուսափողական էվֆեմիզմները:

Գիտակցելով քաղաքականության հեղհեղուկ բնույթն ու քաղաքագետների ողնաշարերի դյուրաթեքությունը, կարող ենք գուցե բավարարվել մեր առաջ գցված ամեն տեսակի քաղաքական փշրանքներով: Բայց սա մինչեւ այն ժամանակ, երբ կկարողանանք զինակոչի ենթարկել մեր ամբողջ ամերիկահայ համայնքը, որպեսզի կանգնենք ամրակազմ իբրեւ մեկ ու միասնական քաղաքական ուժ:

Մինչ այդ սպասենք պարզելու համար Սամանթա Փաուերի այս նոր հայտնության իրական պատճառները:

**Թարգմ. Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**

**The Armenian Mirror-Spectator**

AZG NEW SHABAT 1.QXD 22/12/2016 21:57 Page 5



ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Հողատվություն



Կամ հոգնել ենք հող տալուց, կամ էլ երբեք ոչ մեկին հող չենք տվել: Հասկանալի է, որ վերջինը չէ. հող շատ ենք տվել ու շատերին ենք տվել: Պարտվել ենք՝ տվել ենք, ստիպել են՝ տվել ենք, բռնի տեղահանել ու ցեղասպանել են՝ տվել ենք... Տալուց հոգնել ենք ու դա հասկանալի է բոլորիս համար, բացի... Կարծում եք Լեւոն Տեր-Պետրոսյանի՞ց, ոչ, Տեր-Պետրոսյանը միակը չէ, որ կողմ է հող տալուն, ավելին՝ Տեր-Պետրոսյանը միակ նախագահը չէ, որ կողմ է հող տալուն: Կողմ էր եւ Քոչարյանը, ով 2006-ին դեռեւս խոսում էր Ադրբեջանին 6,5 շրջան հետ վերադարձնելու հավանականության մասին, ընդգծելով, որ Հայաստանը պատրաստ է Ադրբեջանի հետ քննարկել այդ շրջանները հանձնելու պայմանները: Կողմ է եւ Սերժ Սարգսյանը, ով գտնում է, որ Արցախի Հանրապետության մաս հանդիսացող շրջաններից առնվազն 5-ը անվտանգության գոտի են, իսկ Աղդամը կոնկրետ մեր հայրենիքը չէ: Այնպես որ, ճիշտ չէ ասել, որ Տեր-Պետրոսյանը կողմ է հող հանձնելուն, ճիշտ է ասել, որ նախագահներից Տեր-Պետրոսյանն էլ կողմ է հող հանձնելուն: Այն պարագայում, երբ Արցախի վարչապետի մամուլի խոսնակ Արտակ Բեգլարյանը Ֆեյսբուքի իր էջում հրապարակեց մի խիստ ուշագրավ տեղեկատվություն: Ըստ այդմ՝ միջազգային IPSC սոցիոլոգիական ընկերությունը Արցախում սոցհարցում է անցկացրել, պարզելու, թե կո՞ղմ են արդյոք արցախցիները հող տալուն (ի դեպ, ի՞նչ նպատակով): Պարզվել է, որ արցախցիների 99,7 տոկոսը դեմ է 7 շրջանները միանգամից Ադրբեջանին հանձնելուն, 99,4 տոկոսը դեմ է այդ շրջաններն անգամ փուլային տարբերակով Ադրբեջանին հանձնելուն, ավելին՝ 82 տոկոսը գտնում է, որ եթե Արցախին ստիպեն հող հանձնել, ապա արցախցիները պատրաստ են զենք վերցնել եւ թույլ չտալ այդ հողատվությունը: Ճիշտ է, սոցիոլոգիական հարցումն անցկացվել է այս տարվա հուլիսին, երբ ապրիլյան վերքերը դեռ թարմ էին, սակայն չեմ կարծում, որ հիմա արցախցիների դիրքորոշումը կարող է սկզբունքորեն կամ էականորեն փոխված լինել:

Այնպես որ, մարդիկ իրենց հողը չեն հանձնում ու չեն հանձնելու, դուք ո՞ւմ հողն եք հանձնում կամ խոսում հանձնելու հավանականության մասին:

Ո՞վ ասաց, որ հողատվությունը խաղաղության հաստատման հիմքն է լինելու: Եթե անգամ միանգամից հանձնենք, 7-ն էլ՝ իրար հետ, մեկ օրում, ու որպեսզի ամեն ինչ համապատասխանի սովորությանը՝ գիշերը: Խոսքն անգամ այն մասին չէ, որ Ադրբեջանը 7-ը ստանալուց հետո էլի է ուզելու, խոսքն այն մասին է, որ Ադրբեջանի հետ այդ մարդիկ ապրելու են՝ կողք-կողքի, հարեւան գյուղ-քաղաքներում, պարտադրված խաղաղությամբ, ի դեպ, հողատվությունը պարտադրված խաղաղությունն է, իսկ վերջինս պարտադրանքով չի լինում, գոնե ժողովուրդների մեջ: Եւ ուրեմն, ասենք տվեցինք, հետո՞: Ո՞վ է երաշխավորում, որ արցախցին ու ադրբեջանցին խաղաղ են ապրելու, թվով որերո՞րդ նախագահը, կամ համանախագահը, կամ խաղաղապահը: Ի վերջո, եթե հողատվությունը միջպետական, միջազգային, միջժողովրդական խաղաղության հաստատման հիմք է կամ միջոց, ապա ինչո՞ւ հիմա հայերն ու թուրքերը (արեւմուտքի) խաղաղ չեն ապրում, չէ՞ որ այդքան հող ենք տվել, ինչ ունեցել են՝ տվել ենք, ինչքան ունեցել ենք, մեծ մասը տվել ենք, լավագույն մասը, երազանքի մասը, ծովից ծո՛վ մասը: Փաստորեն հողատվությունը խաղաղություն չի բերում, քանի որ բոլոր պատերազմները հողի համար են, գոնե մեծ մասը հաստատ հողի համար են եղել, մեր պատերազմները հաստատ հողի համար են եղել, բոլորը, ու մենք բացի վերջին դեպքից՝ միշտ տվել ենք ու մենք միշտ խաղաղություն չենք ստացել, տալուց էլ, չտալուց էլ, ուրեմն ինչո՞ւ տանք: Ո՞ւմ տանք, թուրքի՞ն, որը հայկական հողերի հավաքածու ունի: Լավ, պարզ չէ՞, որ երբ մի ազգ իր հողերը շարունակաբար տալիս է մեկ այլ ժողովրդի, միշտ միեւնույնին, ամեն անգամ պնդելով, որ լավ է քիչը պահենք, քան ամբողջը կորցնենք, գալիս է մի օր, երբ այդ քիչն էլ չի լինում, տալու բան չի լինում, հողը, անգամ ամենասուրբ, մանավանդ ամենասուրբը ավարտվելու առանձնահատկություն ունի: Մի օր, երբ միշտ տալիս ես ու երբեք չես խրատվում, տեսնում ես, որ քե՛զ էլ չի մնացել: Նրանք, որոնց տվել ես, էլի են ուզում, ինչպես ցույց է տալիս պատմությունը, նրանք, ովքեր երաշխավորում էին, որ սա էլ տուր, էլ չես տա, լուռ հետեւում են այդ դարավոր հողազրկումիդ, ինչպես ցույց է տալիս նույն պատմությունը:

Լավ, այսքան հող չունենք, այսքան հողատուներ որտեղի՞ց ունեցանք.... Հերիք չէ՞: Խրատվելը, հասկանալը եթե անգամ չի ստացվում, գոնե չե՞նք հոգնել այս դարավոր հողատվությունից, «հող՝ խաղաղության դիմաց» սուտ խոստումներից, անվտանգության երաշխիքներից, չարերի հետ բարիդրացնությունից, սեւին սպիտակ ասելուց, գերեզմանները՝ լավագույն տղերքի, հեռվում թողնելուց, ու պատմական հայրենիք երազելուց:

Բերենք փոխարենը տուն սարքենք: Ի՞նչն է շատ Հայաստանում, տան պահանջարկը, ի՞նչ հողեր են մեծամասնություն կազմում 7 շրջաններում, ամայի: Բերենք այդ հողերն՝ ամայի, մեզ էլ անտուն չթողնենք:

Եկեք մեզ անտուն չթողնենք... Ու խաղաղվենք:

# Մխտոր, ծաղիկներ եւ Արմենը

Այս տարվա սկզբին հայաստանյան ընդդիմության գործերն ավելի լավ էին, քան հիմա: Բանն այն է, որ եթե տարվա սկզբին ՀՀԿ-ն ուներ 152 հազար անդամ, ապա հիմա՝ տարեվերջին, ունի 158 հազար անդամ: Ճիշտ է, ընթացիկ տարում ՀՀԿ-ն հազար հոգու հեռացրել է իր շարքերից, քանի որ Հանրապետականը պարբերաբար, գոնե տարին մեկ, մաքրում է իր շարքերը (տեսնես ումի՞ց, կամ ինչի՞ց), բայց դա չի նշանակում, որ ընդդիմության հնարավորություններն ավելանում են: Դրա համար պետք է ընդդիմությունը նայի ՀՀԿ-ին եւ սովորի, օրինակ, ինչպես խորքային եւ բացառիկ քաղաքականություն վարել, ինչպես հանրապետությունում մեկ հայտնի լինել (կարեւոր չէ՝ ինչով), ինչպես ամենուրեք լինել, այլ ոչ թե լոկ հեռուստատեսությամբ կամ Ֆեյսբուքում: Բոլոր նրանք, ովքեր ցանկանում են այսպիսի հաջողություններ արձանագրել ՀՀԿ-ն, ինչպես հասկանում եմ, առաջարկում է երկու բան՝ կամ միանալ ՀՀԿ-ին եւ դառնալ բացառիկ եւ խորքային քաղաքականություն իրականացնող, հանրապետությունով մեկ հայտնի, կամ էլ ընդունվել ՀՀԿ-ի քաղաքական-կուսակցական դպրոց, հետո ավարտել այն եւ բացել ընդդիմադիր կուսակցություն: Երրորդ տարբերակ չկա, ավելի ճիշտ՝ երրորդ տարբերակը հեռուստատեսությունն է, որը հաշվի առնելով ոլորտի առանձնահատկությունները, կարող է նպաստավոր չլինել ընդդիմության համար ՀՀԿ-ին հասնել-անցնելու գործում, կամ էլ Ֆեյսբուքն է, որը, սակայն եւս արդյունավետ չի կարող լինել, քանի որ 158 հազարանոց ՀՀԿ-ն ցանկացած պահի կարող է Ֆեյսբուք գործուղել ավելի շատ մարդ, քան ունի հայաստանյան ֆեյսբուքյան որեւէ կուսակցություն:

Մի խոսքով՝ ընդդիմության գործերը լավ չեն ու հաշվի առնելով, որ եկող տարի ընտրություններ են, այն էլ խորհրդարանական, այն էլ միայն կուսակցությունների միջեւ, մոտ ապագայում ընդդիմության գործերը չեն էլ լավանալու: Եթե, իհարկե, ընդդիմությունը ամբողջ կազմով չմտնի ՀՀԿ-ի մեջ, երիտթեւերին էլ (եթե կան) չուղարկի ՀՀԿ-ի կուսակցական-քաղաքական դպրոց:

Բայց մի ճանապարհ էլ կա. ճիշտ է, այն անցնելու համար մինչեւ եկող տարվա ապրիլ (խորհրդարանական ընտրություններ) քիչ ժամանակ է մնացել, բայց եթե ընդդիմությունն ուզում է երբեւէ հաջողություն ունենալ երկրում, իսկ հաջողությունն ընդդիմության պարագայում իշխանության գալն է, ապա պետք է անցնի այդ ճանապարհը:

Տեսեք, ի՞նչ է անում Հանրապետականը, որպեսզի ընտրվի: Ես հասկանում եմ, որ շատերը կպատասխանեն՝ ոչինչ էլ չի անում, կլինեն նաեւ պատասխաններ, թե բա՝ որքան ուզում, խփում են: Կլինեն նաեւ մարդիկ, ովքեր կպնդեն, որ կաշառք է բաժանում: Կլինեն քչերը, ովքեր անձամբ տեսած կլինեն, թե ինչպես է բաժանում, եւ ոչ մեկն այդ մասին վկայություն չի տա: Շատերի կարծիքով օգտագործում է վարչական ռեսուրսը, մի խոսքով՝ ազնիվ չի խաղում:

Եթե անգամ ընդունենք, որ դա այդպես է, դրա մասին չէ, որ խոսելու ենք, այլ շատ պարզ մի բանի: Օրինակ, որպեսզի, ենթադրենք, Իջեւանի Խաշթառակ գյուղը ընտրի ՀՀԿ-ին, Հանրապետականը շքեղ մեքենաներով գնում է տվյալ գյուղ, իջնում շքեղ հագուկապով, խոսում առօրյա, իսկ ավելի շատ՝ գլոբալ խնդիրներից, եթե գյուղացիները հետաքրքրվեն, ապա անգամ ամերիկացի հանրապետական Թրամփից, ու նորից նստում են իրենց շքեղ մեքենաներն ու վերադառնում են, չմոռանալով կուսակցության գրասենյակներում աշխատող աղջիկներին եւ տղաներին ասել, որ «պտիչկա» դնեն տվյալ գյուղի վրա, «արդեն եղել ենք»:

Իսկ ի՞նչ է անում ընդդիմությունը, երբ ցանկանում է նույն բանը: Էլի նստում է իր՝ ոչ այդքան շքեղ, իսկ երբեմն էլ ավելի շքեղ մեքենաները, գնում տվյալ գյուղ, իջնում շքեղ հագուկապով, խոսում առօրյա խնդիրներից, իսկ հաճախ՝ գլոբալ խնդիրներից. եթե գյուղացիները հետաքրքրվեն, նաեւ մարդու իրավունքներից, ժողովրդավարության արդի համաշխարհային միտումներից, եւ նորից նստելով ոչ այնքան շքեղ, իսկ երբեմն էլ ավելի շքեղ մեքենաները՝ վերադառնում: Այսինքն, ըստ էության, այն ինչ անում են՝ ոչնչով չի տարբերվում նրանից, ինչ անում է ՀՀԿ-ն:

Հիմա, եթե գումարենք այն հանգամանքը, որ ՀՀԿ-ն այս ամենն անելուց բացի փող է տալիս, կամ աշխատանք է առաջարկում, կամ հստակ ու կոնկրետ տեղական կամ անձնական նշանակության հարց է, ինչպես ասում են՝ «տուտժե» լուծում, ապա ինչո՞ւ պետք է, օրինակ՝ աչաջուրցին ՀՀԿ-ին չընտրի: Չի ընտրի, եթե ընդդիմության միջոցով կարողանա իր հարցերը լուծել, չի ընտրի՝ եթե ընդդիմությունն իր շարժուձեւով, հագուկապով, խոսելու տոնով, ձեւով, դեմքի արտահայտությամբ, միմիկայով, ձեռք սեղմելով ու ամենակարեւորը՝ հանդիպումների հաճախականությամբ ու արդյունավետությամբ տարբերվի ՀՀԿ-ից: Այսինքն, ո՞վ է խանգարում ընդդիմությանը, ընդդիմադիր որեւէ կուսակցությանը, եթե իհարկե մեկ հոգանոց կուսակցություն չէ, շաբաթը մեկ անգամ գնալ մարզեր, հեռավոր գյուղեր, զրուցել մարդկանց հետ, խոսել ու ամենակարեւորը՝ լուծել նրանց խնդիրները: Ռեսուրս չունե՞ն, բա ինչպե՞ս են մրցակցում ՀՀԿ-ի հետ: Ունե՞ն, բա ինչո՞ւ չեն օգտագործում, մանավանդ երբ պնդում են, որ դիմացինը ազնիվ չի խաղում: Ընդ որում, երբ ասում ենք շաբաթը մեկ, նկատի չունենք քաղաքական ամսվա շաբաթները, նկատի ունենք բոլոր շաբաթները, ասենք՝ ամեն ուրբաթ օր, նույն Աչաջուրի բնակիչները գիտեն, որ իրենց այցելելու է «Ցավներդ տանեմ» ընդդիմադիր կուսակցությունը, որպեսզի խոսի իրենց ցավի մասին ու... տանի:

Մի խոսքով, ՀՀԿ-ին հաղթելու համար, եթե իհարկե դրա ցանկությունը կա, պետք է կա՛մ մտնել ՀՀԿ ու ներսից հաղթել, կա՛մ էլ անել այնպես, ինչպես ՀՀԿ-ն չի անում: Ցույց կտան՝ 158 հազար անդամ եւ 1938 տարածքային կազմակերպությո՞ւն, դուք էլ ցույց տվեք մարզերը, շրջանները, գյուղերը եւ գյուղացիներին: Կասեն, որ իրենք բացառիկ են եւ խորքայի՞ն, դուք էլ հարցրեք, թե վերջին անգամ ե՞րբ են Արագածի լանջերի հովիվների հետ խաշ կերել, ու քանի որ մխտոր չունեին, մխտոր տարել: Կասեն, որ իրենք ամենուրե՞ք են, դուք էլ հարցրեք նրանց, թե ի՞նչ է Երեւան-Իջեւան մայրուղու 56-րդ կիլոմետրի վրա եփած եգիպտացորեն վաճառող գյուղացի տղայի անունը: Ի դեպ, ի՞նչ է, չգիտեք, բա ինչպե՞ս եւ ինչո՞ւ եք պահանջում, որ նա ընտրի ձեզ:

Եթե ուզում եք այս ճանապարհն անցնել, ապա սկսեք հենց այսօրվանից. Հայաստանը փոքր երկիր է, ամենուրեք լինել կհասցնենք մինչեւ ապրիլ: Այլ հարց է, որ ամեն տեղ չէ, որ ձեզ կհավատան: Հավատը վերականգնելու համար մինչեւ ապրիլ ժամանակը չափազանց քիչ է, բայց դա չի նշանակում, որ դուք հենց այսօրվանից չպետք է սկսեք:

Տաք կհագնվեք, մարզերում հաստատ ցուրտ է: Հա, այդ տղայի անունը Արմեն է, ամառ- ձմեռ այնտեղ է, երբ եգիպտացորեն չի լինում, ծաղիկ է վաճառում, կարող եք ամբողջը գնել ու նվիրել ձեր գնացած գյուղի բոլոր կանանց եւ աղջիկներին: Եթե ձեզ չընտրեն, գոնե... կհիշեն:

Հ. ԱՖՅԱՆ

AZG NEW SHABAT 1.QXD 22/12/2016 21:57 Page 6



# Ավետարան ըստ Օհանյանի՞

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ
Ստեփանակերտ

Լրատվամիջոցներից մեկը ԼՂ կարգավորման չորս տարբերակ է մատնանշել՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի, Ժիրայր Սեֆիլյանի, Սերժ Սարգսյանի եւ Սեյրան Օհանյանի: Ըստ այդմ, Տեր-Պետրոսյանի «*պատկերացումները դիվանագիտական եւ աշխարհաքաղաքական ոլորտներում խիստ սահմանափակ են կամ էլ այս մարդը (Հայաստանի առաջին նախագահը- Վ. Ա.) ներքուստ իրատեսական չի համարում, որ ԼՂ-ն երբեւիցե կարելի է դուրս բերել Ադրբեջանի կազմից, եւ քանի որ այդպես է, ապա Հայաստանը պետք է համակերպվի Ղարաբաղի կորստի հետ, քանի որ առանց դրա եւ առանց Ադրբեջանի եւ Թուրքիայի տարածքների ապաշրջափակման Հայաստանի զարգացումը ապագա չի կարող ունենալ*»:

Հեղինակին, ինչպես տեսնում ենք, լքել է ոչ միայն ողջախոհությունը, այլեւ տարրական բարեխղճությունը, կամ էլ նա պարզապես անիրազեկ է: Հակառակ դեպքում չէր նենգափոխի եւ Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակումը վերացնելու անհրաժեշտության փոխարեն չէր գրի «*Ադրբեջանի եւ Թուրքիայի տարածքների ապաշրջափակում*», ինչից տպավորություն կարող է ստեղծվել, թե Հայաստանն է շրջափակել Ադրբեջանին եւ Թուրքիային: Ինչ վերաբերում է առաջին նախագահի «*համոզմունքին, որ ԼՂ-ն երբեւիցե անհնար է դուրս բերել Ադրբեջանի կազմից*», ապա բավական է մատնանշել մի փաստ. 1997թ. միջնորդների ներկայացրած եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմից ընդունված, իսկ ՀՀ վարչապետ Ռոբերտ Քոչարյանի կողմից մերժված՝ ԼՂ կարգավորման փուլային տարբերակի մաս կազմած եւ ռազմական հակամարտությանը վերջ դնելու նպատակ հետապնդած համաձայնագիրը պետք է ստորագրվեր Ադրբեջանի, ԼՂՀ եւ Հայաստանի կողմից: Դա լինելու էր կողմերի խորհրդարաններում վավերացման ենթակա եւ նոր միայն ուժի մեջ մտնող միջազգային պայմանագիր, քանի որ երաշխավորներ էին հանդես գալու Ռուսաստանը, ԱՄՆ-ը եւ Ֆրանսիան: Այսինքն, այդ համաձայնագիրն ստորագրող ԼՂՀ-ն ինքնին ստանալու էր միջազգային հարաբերությունների իրավասուբյեկտություն՝ դրանից բխող կարգավիճակով եւ լիազորություններով ու, իհարկե, պարտավորություններով հանդերձ: Թե որքանով է դա «ապացուցում», որ Տեր-Պետրոսյանը «*ներքին համոզմունք ունի, որ ԼՂ-ն անհնար է երբեւիցե դուրս բերել Ադրբեջանի կազմից*»՝ թողնենք հեղինակի խղճին եւ երեւակայությանը:

Նա գտնում է, որ Ժիրայր Սեֆիլյանի տարբերակը տրամագծորեն հակառակ է Տեր-Պետրոսյանի առաջարկածին: Եւ եզրահանգում, որ իբրեւ երկու՝ «պարտվողական» եւ առավելապաշտական մոտեցում, Տեր-Պետրոսյանի եւ Սեֆիլյանի տարբերակները հավասարապես վտանգավոր են ու ոչ կիրառելի, եւ անցնում Սերժ Սարգսյանի մոտեցումների մեկնաբանությանը, ապա ամփոփում. «*Շատերը կասեն, որ Սերժ Սարգսյանի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի ծրագրերը իրարից չեն տարբերվում: Բովանդակային առումով այդպես էլ կա* (հենց այս «անմեղ» միտքն է, ըստ երեւույթին, սույն հրապարակման գլխավոր ուղերձը- Վ. Ա.), *սակայն պետք է արձանագրել եւս մեկ փաստ: Ի տարբերություն Տեր-Պետրոսյանի, Սերժ Սարգսյանը քաղաքական դոկտրինիոր չէ եւ շատ լավ հասկանում է այն հետեւանքները, որ կարող է լինել (գրագիտությանը նայեք- Վ. Ա.) Հայաստանի եւ Ղարաբաղի համար, բայց եւ որպես գործիչ այլ տարբերակ չունի, քանզի «երկաթե շերեփ» սարքելու շանսն անհույս կորցրել է»:*

Խնդիրն, ուրեմն, հեղինակի ձեւակերպմամբ՝ Հայաստանում «*երկաթե շերեփը սարքելու*» մեջ է, եւ քանի որ Սերժ Սարգսյանն այդ «*շանսը անհույս կորցրել է*», պետք է սեւեռվել նոր հնարավորություն ստեղծելու եւ նպատակն իրագործելու վրա: Այստեղից անդրադարձ է արվում ապրիլյան պատերազմին Սերժ Սարգսյանի եւ Սեյրան Օհանյանի վերաբերմունքին: «*Եթե Սերժ Սարգսյանը հայտարարեց* (որտե՞ղ, ե՞րբ- Վ. Ա.), *որ այդ կորցրած տարածքները անիմաստ եւ ոչ ռազմավարական նշանակություն ունեցող տարածքներ էին, ապա Սեյրան Օհանյանը նշեց* (որտե՞ղ, ե՞րբ- Վ. Ա.), *որ պատերազմի ժամանակ միշտ էլ լինում են եւ կորուստներ, եւ ձեռքբերումներ եւ սույն փաստով չարժե ընկճվել, այլ պետք է մտածել ինչ անել, որ հետագայում ունենալ ձեռքբերումներ*»,- ուրվագծում է հեղինակը եւ եզրահանգում. «*Այսպիսով կարող ենք բնութագրել հետեւյալ թեզը, որ Սեյրան Օհանյանը, չհամաձայնելով Սերժ Սարգսյանի այս գնահատականի հետ եւ որոշում ընդունելով դուրս գալ իշխանությունից* (իրո՞ք- **Վ. Ա.**) *հայտ է ներկայացնում նոր տեսակետով հանդես գալ այս հարցի շուրջ, ինչը զգալիորեն տարբերվելու է Սերժ Սարգսյանի տեսակետից*»:

Նախ, որտեղի՞ց է հեղինակին հայտնի դարձել, որ Սեյրան Օհանյանը ԼՂ հարցի վերաբերյալ սեփական տեսակետ ներկայացնելու հայտով է քաղաքականություն մտնում: Երկրորդ, ո՞վ է նրան հուշել, որ Սեյրան Օհանյանի տեսակետը «*զգալիորեն տարբերվելու է Սերժ Սարգսյանի տեսակետից*»: Չէ՞ որ պաշտպանության նախկին նախարարն ընդամենը ֆեյսբուքյան մի գրառում է արել քաղաքականություն մտնելու եւ այդ միջոցով հայրենիքին ծառայությունը շարունակելու մասին եւ իր հայացքները միայն շատ ընդհանուր գծերով է ներկայացրել՝ չհստակեցնելով անգամ, թե որ դաշտում է գործելու՝ իշխանությա՞ն, թե՞ ընդդիմության:

Սեյրան Օհանյանը 1999թ.-ից եղել է ԼՂՀ պաշտպանության նախարար, ՀՀ ԶՈՒ Գլխավոր շտաբի պետ, պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, ապա՝ պաշտպանության նախարար՝ պաշտոնավարելով շուրջ 10 տարի: Եւ նրա քաղաքականություն մտնելու մասին ասվածը խիստ հարաբերական է գոնե այն իմաստով, որ պաշտպանության նախարարի պաշտոնը քաղաքական է, եթե անգամ մի կողմ թողնենք հանգամանքը, թե փաստացի պատերազմի մեջ գտնվող երկրի կյանքում ինչ դեր է վերապահված բանակին առհասարակ, բարձրաստիճան զինվորականությանը՝ մասնավորապես:

Բայց տեսնենք, թե ինչ ամփոփում է արված խնդրո առարկա հրապարակման վերջում. «*Այսպիսով մեր հասարակությունը շանս ունի Ստեփանակերտը եւ Երեւանը հանձնելու եւ Բաքուն գրավելու ծայրահեղ այլընտրանքների միջեւ տեսնելու նոր, իրատեսական առաջարկ՝ այս խնդիրը այնպես լուծելու համար, որպեսզի տարածաշրջանում հաստատվի արժանապատիվ խաղաղություն եւ որի արդյունքում երկու ժողովուրդներն էլ համատեղ կապրեն կողք-կողքի*»:

Որքանո՜վ է իրազեկված հեղինակը Սեյրան Օհանյանի «Ղարաբաղյան ավետարանին», ինչպես վերեւում ասվեց, մնում է խիստ կասկածելի: Հնարավոր է, պաշտպանության նախկին նախարարը վաղը հանդես գա բոլորովին այլ թեզերով կամ այդ մասին առհասարակ չխոսի: Ի վերջո, նա խորհրդարանական ընտրություններին մասնակցության հայտ է ներկայացրել եւ կարող է կենտրոնանալ բացառապես ներքին կյանքի բազմաթիվ չլուծված հարցերի վրա: Բայց քանի որ նրա անունից վստահաբար կամ ենթադրաբար ինչ-որ բան ասվել է, հարկ է առնվազն երկու հարցադրում անել:

Առաջին, ի՞նչ չափորոշիչներ ունի «*արժանապատիվ խաղաղությունը*»: Ո՞րն է այն սահմանը, մինչեւ որտեղ խաղաղությունը կլինի արժանապատիվ, իսկ անդին՝ ոչ արժանապատիվ: Հեղինակի ասածից հասկացվում է, որ Սեյրան Օհանյանի «ավետարանը» «*Ստեփանակերտը եւ Երեւանը հանձնելու եւ Բաքուն գրավելու*» ծայրահեղությունների միջակայքում է: Իսկ դա ներկա փաստացի իրավիճակն է, երբ ոչինչ չենք զիջում, ոչ էլ հաղթական պատերազմ ենք սկսում: Մոտեցման իրատեսականությունը մի կողմ թողնենք եւ երկրորդ հարցադրումն անենք.

- Այդ դեպքում ինչպե՞ս են արդյունքում երկու ժողովուրդները ապրելու ոչ միայն կողք-կողքի, այլեւ՝ «*համատեղ*»: Կողք-կողքի ապրելը հասկանալի է՝ կա Ադրբեջան, կա Հայաստան, կա ԼՂՀ, հաստատված են փոխհամաձայնեցված սահմաններ: Իսկ ո՞րն է «*համատեղ ապրելը*»: Բաքվի 250 000 հայերը վերադառնալո՞ւ են: Եւ համարժեքորեն Հայաստան է գալու 150 000 ադրբեջանցի՞: ԼՂՀ-ից հեռացած ադրբեջանցիները վերահաստատվելու են Շուշիում եւ Ստեփանակերտում, մյուս բնակավայրերո՞ւմ: Գուցե հեղինակը «*համատեղ*» բառը սխալմա՞մբ է օգտագործել:

Բայց՝ լուրջ. հրապարակման «մեխը», կարծես, այս ձեւակերպումն է. «*Մենք պետք է ... բանակաշինությունը դարձնենք ոչ թե երկրին բեռ, այլ այս ոլորտը դարձնենք շոգեքարշ երկրի տնտեսության մյուս ճյուղերի զարգացման համար, ինչպես Իսրայելում*»: Գեղեցիկ է հնչում: Բայց ինչո՞ւ մինչ օրս բանակաշինությունը չէր դառնում տնտեսության մյուս ճյուղերի շոգեքարշը: Ինչո՞ւ գոնե բանակի պարենային ապահովության խնդիրը չէր լուծվում Հայաստանի եւ Արցախի գյուղատնտեսության զարգացման միջոցով... Ինչո՞ւ էր սահմանին կանգնած զինվորը գոմեշի միս ուտում... Ինչո՞ւ հայ գյուղացին կարտոֆիլի ձեռքից կրակն էր ընկնում, իսկ բանակը՝ նույն մթերքը ներկրում արտերկրից...

- Ի սկզբանէ էր Բանը,- Աստվածաշունչն է ասում:

# Վահե Անտոնյան «Մենք հետաքրքրական ժամանակներում ենք ապրում»

**«Ազգը» իր հուլիսի 1-ի համարում արդեն գրել է կենտրոնական եւ առեւտրային/ներդրումային բանկերի, ապահովագրական եւ աուդիտորական ընկերությունների, լրատվական գործակալությունների համար ծրագրային արտադրանք մշակող SCDM ընկերության մասին, որի երեւանյան բաժանմունքը խոշորագույններից է «Վիասֆեր Տեխնոպարկ»-ում: Օրերս զրուցեցինք ընկերության հիմնադիր, գերմանաբնակ մեր հայրենակից Վահե Անտոնյանի (Vahe Andonians) հետ: Պրն Անտոնյանը նախընտրեց խոսել ֆինանսական ծառայությունների ոլորտում աշխարհում ներկայումս առկա միտումների (trends) մասին:**



**Իր խոսքերով, դրանցից ամենաառաջնայիններից այսօր շարունակում է մնալ Blockchain տեսակի ծրագրային փաթեթի զարգացման միտումը: Ըստ էության, այն հիմք է գործառնական հավելվածների համար, որն ապահովում է վստահության, հաշվետվողականության եւ թափանցիկության, միաժամանակ նպաստելով արդյունավետության կտրուկ բարձրացմանը գործընթացներում: Այն ունի հսկայական հեղափոխական ներուժ վերը նշված ասպեկտներից յուրաքանչյուրում:**

**Ես կարծում եմ սակայն, շարունակում է Վահե Անտոնյանը, որ Blockchain-ի բնութագրումը հենց այս ձեւով հանգեցնում է դրա ներուժի թերագնահատմանը: Ըստ էության, համակարգչային ցանցը պարզապես մի հեռահաղորդակցային ցանց է, որը թույլ է տալիս համակարգիչներին կիսվել իրենց ռեսուրսներով: Այն նաեւ ծառայում է որպես հիմք ինտերնետի համար, որն, իր հերթին, արդեն առնչվում է մեր կյանքի բոլոր բնագավառներին ամեն առումով, այսպիսով խիստ նվազեցնելով բազմաթիվ ծառայությունների կարեւորությունը շատ ճյուղերում կամ դրանք լիովին դուրս մղելով:**

**Պրն Անտոնյանի վկայությամբ, աճող թվայնացումը հիմնված է այս տեխնոլոգիայի վրա, եւ սա նվազեցնում է ծառայությունների առանց այն էլ ցածր ինքնարժեքը համարյա մինչեւ զրո, եւ այս իրողությունը նույնիսկ մի սպառնալիք է դառնում կապիտալիզմի համար՝ ըստ ամերիկյան հայտնի տնտեսագետ եւ սոցիալական գիտությունների բնագավառի հետազոտող Ջերեմի Ռիֆկինի:**

**Նույնը վերաբերում է Blockchain-ին:**

**Վստահության «դեմոկրատիզացիայի» շնորհիվ այն ունի ահռելի ներուժ հեղափոխություն անելու բազմաթիվ ոլորտներում եւ փոխելու մեր ապրելակերպը, նաեւ հիմնավոր կերպով ռեսուրսները կազմակերպելու: Օրինակ, մոտ ապագայում հեշտությամբ կանխատեսելի է, որ այսպես կոչված «խելացի պայմանագրերը» (smart contracts, Blockchain-ի հավելված) կրկին հեղափոխություն կիրականացնեն երաժշտական արդյունաբերության մեջ:**

**«SCDM ընկերությունում մենք ո՛չ միայն ստեղծում ենք հավելվածներ հիմնված Blockchain-ի եւ «խելացի պայմանագրերի» համար դրա լուծումների վրա, այլ նաեւ ուսումնասիրում ենք այս ոլորտը տեսական եւ գործնական մակարդակով», - ասում է Վահե Անտոնյանը:**

**Ըստ նրա, երկրորդ ուղղությունը, որը շարունակում է մնալ կարեւորներից մեկը՝ արհեստական ինտելեկտն է (ԱԻ, artificial intellect): Եվ... «Չնայած որ մենք տեսնում ենք վերջինիս ավելի ու ավելի լայն կիրառում մեր կյանքում, ինչպես, օրինակ, ինքնակառավարվող ավտոմեքենաները, այս հարցում մենք դեռ այսբերգի գագաթին ենք»:**

**Իր խոսքերով, մինչդեռ ԱԻ-ի օգտագործումը բավականին հեշտ է հիմա, սակայն կան շատ բաց հարցեր այս ոլորտում:**

**Նույնը վերաբերում է նաեւ ֆինանսական ծառայությունների ոլորտին: Որոշ հարցերը, օրինակ՝ թե ինչպե՞ս պետք է օրենսդիրները գնահատեն ռոբոտ-խորհրդատուների (Forex, օրինակ) պիտանելիությունը, դեռ լուծված չեն:**

**Ընդհանուր առմամբ, մենք ապրում ենք շատ հետաքրքրական ժամանակներում հենց հիմա, այսօր, հայտարարում է Վահե Անտոնյանը: «Քանի որ մենք գտնվում ենք Blockchain-ի եւ արհեստական ինտելեկտի վաղ փուլերում, յուրաքանչյուր ոլորտում կարող է զգալիորեն փոխել բազմաթիվ ոլորտների ապագան»,- ասում է նա:**

Զրուցեց՝ ԳՈՒՐԳԵՆ ԽԱԺԱԿՅԱՆԸ

# ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գործունեության արդյունքներն ու ակնկալվող ապագան

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում գործում են բազային ֆինանսավորմամբ հետեւյալ 4 գիտական ուղղությունները.

1. Մակրոտնտեսական հիմնախնդիրներ եւ ֆինանսներ:
2. Ծառայությունների ոլորտի զարգացում եւ սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ:
3. Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ:
4. Տեսական հետազոտություններ եւ տնտեսագիտական մտքի պատմություն:

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գործունեության առանձնահատկությունն է դարձել գիտական հետազոտություններին գործնական ուղղվածություն հաղորդելը: Եվ պատահական չէ, որ ինստիտուտի կողմից հրատարակված գրքերն ու գիտական հոդվածները, հիմնականում, նվիրված են եղել հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման մի շարք գործնական հարցերի լուսաբանմանն ու վերլուծությանը, ինչպես նաեւ համապատասխան առաջարկությունների մշակմանը, որոնք յուրաքանչյուր տարի ներկայացվել են ՀՀ կառավարություն: Նախորդող 10 տարիների ընթացքում ինստիտուտում հրատարակվել է գիտական հոդվածների 16 ժողովածու, 88 մենագրություն եւ 1294 հոդված (այդ թվում 82-ը՝ միջազգային): Ինստիտուտի 2 գիտաշխատողներ պաշտպանել են դոկտորական, իսկ բազմաթիվ հայցորդներ եւ ասպիրանտներ՝ թեկնածուական ատենախոսություններ, որոնցից 7-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ են: Ինստիտուտի հրատարակած աշխատանքներից մեկը հեղինակավոր հանձնաժողովի կողմից ճանաչվել է 2013թ. լավագույն գիտական աշխատանք, իսկ մենագրության հեղինակն արժանացել է Մ.Գոշի անվան I կարգի մրցանակի: Կատարված գիտահետազոտական աշխատանքների հիման վրա ՀՀ Գիտական պետական կոմիտեի կողմից 2014 եւ 2016 թթ. «Արդյունավետ գիտական աշխատող» մրցույթի հաղթողներ են դարձել Վ.Լ.Հարությունյանը եւ Ա.Հ.Բայադյանը:

Ինստիտուտի կողմից ներկայացված առաջարկությունների արդյունքում էր, որ Տիգրան Սարգսյանի վարչապետության օրոք ուժը կորցրած ճանաչվեցին «Պարզեցված հարկի մասին» եւ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքները: Ինստիտուտի կողմից կատարված առաջարկությունները վերաբերել են բազմաթիվ հիմնախնդիրների, որոնք բոլոր տարիներին համակողմանիորեն քննարկվել են համապատասխան նախարարությունների, գերատեսչությունների եւ մասնագետների հետ, իսկ այնուհետեւ հետագա ընթացք են ստացել: Միաժամանակ ինստիտուտի կողմից իրականացվող աշխատանքներից հիշատակության արժանի է նաեւ այն, որ սկսած 2012թ.-ից անցկացնում են ՊԵԿ-ի կողմից կազմված ստուգման ակտերի ճշտության փորձաքննություններ: Փորձաքննական ծառայությունները ներառում են համապատասխան տնտեսվարողների գծով հաշվապահական եւ ֆինանսատնտեսագիտական ուսումնասիրություններ եւ վերլուծություններ: Վերջիններս շրջանակում իրականացվում են հարկային եւ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ պարտադիր վճարումների գծով պարտավորությունների չափի ճշտության եւ դրանց առաջացման պատճառների հետազոտություններ, լրացուցիչ պարտավորությունների չափի որոշում՝ այդպիսիք առկա լինելու դեպքում, օրենսդրության պահանջների համապատասխան խախտումների արձանագրում, հարկային եւ մաքսային մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքում կազմված ստուգման ակտերի, դրանցում արձանագրված խախտումների դրվագների, պարտավորությունների չափի ու վերջիններիս հաշվարկման մեթոդաբանության ճշտության եւ հիմնավորվածության գնահատում:





Ստորեւ ներկայացվում է 2016թ. գիտական խորհրդի կողմից հաստատված հետազոտվող թեմաների շրջանակը եւ յուրաքանչյուրի գծով ստացված կիրառական գիտական արդյունքները:

***1. «Հայ ժողովրդի ժողովրդագրական եւ նյութական կորուստները ցեղասպանության ընթացքում եւ դրանց փոխհատուցման հիմնախնդիրները» (գիտ. ղեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Լ.Հարությունյան) թեմայի շրջանակներում ներկայացվել են Բուրսայի եւ Ադանայի նահանգների հայերի սեփականության, ինչպես նաեւ եկեղեցու տնօրինության տակ գտնվող անշարժ գույքի նկարագիրը նախքան 1915 թ., ինչպես նաեւ կորուստները Հայոց ցեղասպանության տարիներին: Բուրսայի նահանգի դեպքում ներկայացվել է շերամաբուծության եւ թեթեւ արդյունաբերության մեջ հայ գործարարների դերը, Ադանայի եւ Բուրսայի նահանգի պարագայում՝ հանքերի մասին տեղեկատվություն: Տրվել է Բուրսայի եւ Ադանայի նահանգները՝ որպես հարեւան նահանգների համար արտագնա աշխատանքի վայր (150,000) եւ վերջիններիս զբաղվածության հնարավորությունները տարբեր ոլորտներում: Բուրսայի նահանգի դեպքում ներկայացվել է տարբեր եկեղեցիների ունեցվածքի եւ/կամ անշարժ գույքի նկարագիրը: Ադանայի նահանգում նշվել է նահանգում որոշ բնակավայրերում բնակվող հայերի ունեցվածքի վերականգնման համար անհրաժեշտ գումարի չափը՝ 39.5 մլն. ԱՄՆ դոլար (2016թ. գներով):***

Վերոնշյալ թեմայի շրջանակներում անց է կացվել հանրապետական 2 գիտաժողով, որոնց նյութերը հրատարակվել են: Այս թեմայի շրջանակներում 2017թ. I եռամսյակում հրատարակվելու են եւս 2 մենագրություն: Նշված 2 մենագրությունների եւ այս թեմայով հրատարակված 2 գիտական հոդվածների ժողովածուների մասնագետ խմբագիրն է՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայկական հարցի եւ Հայոց ցեղասպանության պատմության» բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմեն Մարուքյանը:

***2. «Տնտեսվարող սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեության գնահատման հիմնահարցերը եւ դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» (գիտ. ղեկ.՝ տ.գ.դ., պրոֆեսոր Ա.Հ.Բայադյան) թեմայի շրջանակներում կատարված վերլուծությունների արդյունքում առաջարկվել են տարբեր ճյուղերում ներդրումային ծրագրերի խթանում, բյուջետային ծախսերի կրճատում, կազմակերպությունների մրցունակության համակողմանի քանակական գնահատման միասնական մեթոդիկայի կիրառում:***

***3. «Միգրացիոն գործընթացների կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում» (գիտ. ղեկ. տնտ.թեկն. Ա.Զատիկյան) թեմայի շրջանակներում ներկայացվել են ինչպես ՀՀ-ի միգրացիոն տեղաշարժերի ներկայիս վիճակը, այլ երկիր օտարերկրյա աշխատուժի ներգրավման հետ կապված խնդիրները: Առանձնացվել են այն գործոնները, որոնք նպաստում եւ զսպում են աշխատանքային միգրացիան: Ցույց է տրվել, որ աշխատանքային միգրանտների դրամական փոխանցումները լրջորեն ազդում են ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման վրա:***

***4.«Հարկաբյուջետային քաղաքականության բարելավման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» (գիտ.ղեկ.՝ տնտ.թեկն. Կ.Սարգսյան) թեմայի շրջանակներում մեծ նշանակություն է տրվել հարկային բեռի կրճատմանը եւ հարկման բազայի ընդլայնմանը: Որպես հարկային ոլորտի բարեփոխումներ՝ առաջարկվել է կիրառել ԱԱՀ-ի տարբերակված դրույքաչափեր, շահութահարկի գծով արագացված ամորտիզացիան եւ ֆիզիկական անձանց հարկային բեռի կրճատում:***

***5. «Հայ-իրանական տնտեսական հարաբերությունների հեռանկարներն ու ուղղությունները ժամանակակից աշխարհաքաղաքական պայմաններում» (գիտ. ղեկ.՝ տնտ.թեկն. Հ.Մարկոսյան) թեմայի շրջանակներում կարեւորվել է ֆինանսական ռեսուրսների կոնսոլիդացմամբ հյուսիս-հարավ ավտոմայրուղու շինարարությունը հրատապ ավարտին հասցնելը եւ հետո միայն այլ տրանսպորտային ենթակառուցվածքների նպատակահարմարության քննարկումն ու իրականացումը, ԵՏՄ տարածք վերամշակված գյուղմթերքի անխափան մատակարարման իրականացումը, հայրենական վերամշակող արդյունաբերության սեզոնային ծանրաբեռնվածության հարթեցման նպատակով իրանական ծագմամբ գյուղմթերքի ներկրման, վերամշակման եւ արտահանման աջակցության մեխանիզմների կազմակերպումը, ինչպես նաեւ զբոսաշրջության խթանման նպատակով առեւտրի եւ սպասարկման կետերում արտարժույթով վճարումներ կատարելու թույլատրումը:***

***6. «Հայ տնտեսագիտական մտքի արդի ընթացքի ուրվագծեր. գիտական հետագիծ» (գիտ. ղեկ.՝ տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Ն.Սարինյան) թեմայի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքները զետեղվել են Վ.Լ.Հարությունյան, Ռ.Ն.Սարինյան, «Տնտեսագիտության ինստիտուտը 10 տարում. 2006-2016թթ. (հետազոտական արդյունքների ուրվագիծ)» մենագրությունում: Աշխատությունում ամփոփվում է տնտեսագիտության ինստիտուտի տասնամյա (2006-2016թթ.) հետազոտական գործունեության հետագիծը:***

Հանրության հետ կայուն կապերի պահպանման եւ ինստիտուտում կատարված հետազոտությունների հրապարակայնացման նպատակով գործարկվել է նոր եռալեզու կայք (www.economics.sci.am), որի դիզայնը իրականացվել է ինտերնետ միջավայրի ժամանակակից պատկերացումների եւ պահանջների ընկալումներին համահունչ:

Հատկանշական է, որ կայքում բաց մատչելիությամբ ներկայացված են վերջին տարիներին ինստիտուտի կողմից հրատարակված շուրջ 500 հոդվածների եւ ավելի քան 40 գրքերի էլեկտրոնային տարբերակներ, ինչը ոչ միայն խորը պատկերացում է տալիս կատարված եւ կատարվող գիտական հետազոտությունների ուղղվածությունների վերաբերյալ տեղեկատվություն, այլեւ նաեւ դրանք լուրջ տեղեկատվական հիմք կարող են հանդիսանալ ուսանողների եւ տնտեսագետների համար: Կայքի շարունակական զարգացման վերջնական նպատակն այն է, որ այն վերածվի հայ տնտեսագիտական հանրության համար տեղեկատվության ստացման եւ մտքերի փոխանակման միասնական հարթակ:

Ինստիտուտի գիտական հետազոտությունների եզրակացություններն ու արվելիք առաջարկությունների օգտակար գործողության գործակիցը բարձրացնելու եւ առավել արդյունավետ գիտական ու կիրառական գործունեություն ծավալելու նպատակով վերանայվել է 2017թ. բազային թեմաների ընտրության մոտեցումը, այսինքն՝ դրանք բոլորն էլ բխեցվել են ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունված ՀՀ կառավարության ծրագրի ելակետային դրույթներից: Մասնավորապես, 2017թ. բազային ֆինանսավորմամբ նախատեսվում է իրականացնել հետեւյալ հետազոտական թեմաները:

1. Հարկային եւ մաքսային մարմինների գործունեության կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում,
2. ՀՀ տնտեսության կայուն աճի ապահովման հիմնախնդիրները եւ լուծման ուղիները,
3. ՀՀ-ում սոցիալ-ժողովրդագրական վիճակի բարելավմանն ուղղված նորովի մոտեցումների մշակում եւ ներդրում,
4. Վերականգնվող էներգետիկայի զարգացման խթանման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում,
5. Հարկային վարչարարության բարելավման հիմնախնդիրները կոռուպցիոն ռիսկերի նվազեցման եւ հարկային հաշվետվությունների էլեկտրոնային համակարգի ներդրման համատեքստում,
6. Հարկային ստուգումների արդյունավետության բարձրացման եւ հարկատուների ռիսկայնության գնահատման չափանիշների ձեւավորման հիմնախնդիրները ՀՀ-ում,
7. Ներքին եւ օտարերկրյա ներդրումային ակտիվության խրախուսումը, որպես ՀՀ կայուն տնտեսական աճի ապահովման գործոն,
8. Ռազմաարդյունաբերության, նորարարությունների եւ տնտեսական աճի միջեւ փոխկապվածությունները փոքր եւ բաց տնտեսությունում (ՀՀ օրինակ),
9. Հայկական կազմակերպությունների դիրքավորման հնարավորությունների բացահայտումն ու իրացումը վերազգային կորպորացիաների արժեքղթային ինտեգրման համատեքստում:

2017թ. ընթացքում շարունակվելու են հանրապետական եւ միջազգային ամսագրերում, գիտաժողովներում, ինչպես նաեւ հանրապետական մամուլում հրապարակվել հոդվածներ եւ զեկույցներ, իսկ այնուհետեւ հետազոտության արդյունքները վերածվելու են մենագրությունների, իսկ հետազոտությունների ամփոփ եզրակացություններն ու առաջարկությունները, ինչպես նախկին տարիներին, հասցեագրվելու են ՀՀ վարչապետին՝ համապատասխան նախարարություններին ու գերատեսչություններին գործնական աջակցություն ցուցաբերելու նպատակադրվածությամբ:

***Ինստիտուտի տնօրեն,***
**ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ,**
**տնտեսագիտության դոկտոր,**
**պրոֆեսոր՝**
**ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

AZG NEW SHABAT 1.QXD 22/12/2016 21:57 Page 8



# Հայաստանյայց Առաքելական եկեղեցին Ավետյաց երկրում

## *Հավատքի արիությունը հայերի տարբերիչ գիծն է քրիստոնեության վաղնջական ժամանակներից մինչեւ մեր ժամանակները*

ՌՈԶԱ ՔԱՐԱՄՅԱՆ

*Այնքան էլ կարեւոր չէ, հավատքի եւ հավատացյալի տեսակետից, թե ստորեւ լույս տեսնող հոդվածում ո՞րն է սահմանագիծը ճշմարիտի, ճշմարտանմանի եւ առասպելականի միջեւ: Կարեւորն այս պարագայում հայ հավատացյալի ջերմեռանդ ոգեւորությունն է, ինչը ապրել է մեր հոդվածագիրը օրերս Սուրբ վայրեր այցելելով եւ դրանք հայի հավատքով ընկալելով, ինչը, խոստովանենք, վարակիչ է հատկապես Քրիստոսի ծննդյան առաջիկա տոնակատարություններին ընդառաջ:*

Մեզանից յուրաքանչյուրն ունի նվիրական ցանկություն, որի կատարման համար մենք պատրաստ ենք նույնիսկ ուղեւորվել աշխարհի ծայրը: Նրանց համար, ում հավատը հրաշքների հանդեպ չի չքացել արդի աշխարհի գործամետության մեջ, գոյություն ունեն կախարդական հույսերի եւ իրականացած երազանքների վայրեր: Վայրեր, որտեղ հեքիաթը վերածվում է եղելության, երազները մարմնավորվում են իրականության մեջ, իսկ կատարված ցանկությունների վիճակագրությունը հետագայում երբեք չի մոռացվում:

Սուրբ երկրի պատմությունը նմանակ չունի մեր մոլորակի վրա: Սուրբ երկիրը մեծ չէ, եւ այդուհանդերձ նրա մի ծայրին լեռներ են ու ձյուներ, մյուս ծայրին՝ անապատ եւ տաք ջրեր: Իր հարուստ պատմության շնորհիվ այդ հողը հրեաների, քրիստոնյաների եւ մահմեդականների կրոնական ձգտումների կենտրոնն է: Նման հողի նվիրական էությունն ըմբռնելու փորձերն աներեւակայելի բարդ են: Ամեն տարի այստեղ գալիս է մի քանի միլիոն մարդ: Ավետյաց երկրի հանդեպ սիրո պատճառը ոչ միայն հանգստի բոլոր պայմաններն են, այլեւ հոգեւոր աճի լայն հնարավորությունները: Այստեղ կան այցելության վայրեր, դիտելու եւ զարմանալու առիթներ: Իսրայելը, իր զավթած տարածքներով միասին, երեք ծով է եւ գրեթե 12 կլիմայական գոտի: Աշխարհում նա 97-րդ տեղում է բնակչության թվով եւ 147-րդն է տարածքի մեծությամբ: Սուրբ երկիրը Մերձավոր Արեւելքի բոլոր երկրների մեջ ունի ամենաբարձր կենսամակարդակը եւ արդեն երկրորդ տարին անընդմեջ ամենաերջանիկի կոչումն է կրում Ասիա աշխարհամասում: Այսպիսին է ԱՄՆ-ի Կոլումբիա համալսարանի սոցիոլոգների վճիռը:

Սուրբ երկրում հայերի քրիստոնեական ներկայությունը վերաբերում է քրիստոնեության վաղ շրջանին, որը նախորդել է 301 թվականին: Իր «Սուրբ քաղաք Երուսաղեմի ստորագրությունը» (1859 թ.) աշխատության մեջ Մկրտիչ վարդապետ Արծրունյանը հիշատակում է հայ թագավոր Աբգարի կնոջը՝ Հեղինեին: Բարեպաշտ թագուհին, թողնելով պալատի փառքը, ուղեւորվեց Երուսաղեմ, որտեղ սրբազան վայրերում սկսեց կառուցել մատուռներ: Առաջին հերթին նա պատնեշեց Տիրոջ գերեզմանը, դրա վրա կառուցելով բրգաձեւ մատուռ: Ավանդազրույցի համաձայն, Հեղինեի տունը եղել է Սիոն լեռից ոչ հեռու, որտեղ ապրող Տիրամայրը նա հաճախ այցելում էր: Տիրամայրը պատմում էր իր Միածին որդու մասին եւ Հեղինեի հետ հաճախ աղոթում քրիստոնյաների եւ, իհարկե, Հայաստանի համար, որը 301 թվականին դարձավ առաջին քրիստոնյա պետությունը: Նոր Երուսաղեմում կա Հեղինե թագուհու փողոց: Ավելի ուշ հայ իշխաններից շատերը սկսեցին եկեղեցիներ ու վանքեր կառուցել Սուրբ վայրերում: Արդեն 7-րդ դարում Սուրբ երկրում բոլոր եկեղեցիների ու վանքերի թիվը հասնում էր յոթ տասնյակի: Հայաստանի իշխանական տները կառուցում էին դրանք եւ այնտեղ վանականների գործուղում իրենց թեմերից: Ավելի ուշ Կիլիկիայի հայ թագավորները եւս զգալի ավանդ ներդրեցին եկեղեցիների շինարարությամբ եւ ընծաներով:



Հայաստանյայց եկեղեցում վանքերը քրիստոնեական ավանդույթների եւ հայոց հավատքի պահապաններ էին: Այն ժամանակաշրջանում, երբ Հայաստանն ապրում էր պարսկական եւ օսմանյան լծի ծանր ճնշման տակ, Եկեղեցին միակ օջախն էր, որի շուրջը կարող էր միավորվել ամբողջ հայ ժողովուրդը: Եկեղեցին, ի դեմս կաթողիկոսների եւ հոգեւորականության, ակտիվորեն մասնակցում էր նաեւ քաղաքական հարցերին, մի կողմից, օգնություն փնտրելով տարբեր քրիստոնյա կառավարիչների մոտ, իսկ մյուս կողմից, գլխավորելով ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը:

Երուսաղեմի Հայ եկեղեցու սուրբ հայրերը 7-8-րդ դարերում ստեղծեցին մեծածավալ աստվածաբանական գրականություն: 8-րդ դարը դարձավ մի ժամանակաշրջան, երբ հայկական քրիստոսաբանությունը սկսեց հարստանալ: Աստվածաբանական մտքի անդաստան մտան հավատքի այնպիսի սյուներ, ինչպիսիք են Ամենայն հայոց կաթողիկոս Սբ. Հովհաննես Օձնեցին, Սբ. Խոսրովիկը, Սբ. Ստեփանոս Սյունեցին... Եվ ահա տեղի ունեցավ այն իրադարձությունը, որը պետք է վերջնականապես ձեւավորեր Հայաստանյայց եկեղեցու քրիստոսաբանության համակարգը: Դա Մանազկերտի 726 թ. եկեղեցական ժողովն էր: Այսպիսով, Հայաստանյայց եկեղեցին ի զորու չէ նույնիսկ մտքից ծնունդ առած խոսքով ինչ-որ բան ավելացնելու կամ պակասեցնելու, այլ հաստատապես հետեւում է Սուրբ Հայրերի ուսմունքին, դավանելով «Աստծո մարմնավորված Խոսքի բնության միասնություն»: «Ամեն մի ժողովուրդ իր մեջ կրում է Քրիստոսի միայն իրեն բնորոշ քրիստոսաբանական տիպը, որպես փրկության եւ երկրպագության ներքին հնարավորություն: Եվ առաքելական ավանդությանը որքան հարազատ եւ մաքուր լինի այդ ժողովրդի դավանանքը, այնքան անարատ կլինի նրա քրիստոսաբանական իդեալը»:



Սբ. Հարության տաճարում մենք կանգնած ունկնդրեցինք պատարագը եւ հաղորդություն առանք: Մի կողմից մենք ապաշխարում էինք եւ աղոթում մեր հանգուցյալների համար, իսկ մյուս կողմից Տիրոջը երախտագիտություն էինք հայտնում Երուսաղեմում մեր ստացած շնորհի համար: Մեզ նույնիսկ չզարմացրեց, որ հայկական պատարագի ժամանակ, հայերից բացի, հաղորդություն էին առնում նաեւ ուղղափառներ եւ կաթոլիկ արաբներ, կային եվրոպացի կաթոլիկներ եւ անգամ բազմաթիվ ռուս ուխտավորներ, որոնք չէին կարողացել ներկա գտնվել գիշերային հունական ժամերգությանը: Մենք շատ ուրախ էինք, որ մեր եկեղեցին նեղ ազգային չէ, ինչպես կարծում են ոմանք, եւ Քրիստոսի սիրո մեջ բաց է քրիստոնյաների համար: Տաճարում տիրում էին սերը եւ երանությունը:

Վերջին տարիներին հայերի երիտասարդ սերնդի հետ շփվելիս համոզվում եմ, որ երիտասարդները չգիտեն իրենց ժողովրդի պատմությունը, ծանոթ չեն Հայաստանյայց եկեղեցու դավանանքին եւ նրա հին ավանդույթներին: Ես նույնպես շատ բան իմացա, այցելելով Հայոց պատրիարքարանի Երուսաղեմի, Նազարեթի, Բեթղեհեմի եկեղեցիներ: Հին Երուսաղեմ: Հայոց պատրիարքության փողոց: Դրանից աջ Հայոց ճեմարանի վանդակավոր ցանկապատն էր, իսկ ձախ կողմում Հայոց պատրիարքարանի մուտքն էր եւ Սրբոց Հակոբյանց վանքը: Այդպես մենք հայտնվեցինք մի մեծ ու գեղեցիկ բակում: Գրադարանն ու դպրոցը անցնելով՝ հայտնվեցինք Սբ. Հրեշտակապետացի գավթում: Այդ մենաստանը գտնվում է նախկին քահանայապետի տան տեղում, ում մոտ առաջին հարցաքննության էին բերել գերյալ Քրիստոսին: Սբ. Հրեշտակապետաց վանքը կանանց մենաստան էր եւ բնակեցված էր ընդհուպ 20-րդ դարի վերջը:



Հայաստանյայց եկեղեցու ավանդության համաձայն, երբ ստրուկը հարվածել է Քրիստոսի դեմքին, Երկնային Սերովբեները իրենց թեւերով ծածկել են երեսները. նրանք ցնցված էին: Այդ մասին շարականներից մեկում գրել է Սբ. Ներսես Շնորհալին: Հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը Սբ. Հրեշտակապետաց վանքը հայոց սեփականություն է: Իսկ 1286 թվականին Կիլիկյան Հայաստանի Լեւոն Գ թագավորը վանքն առանձնացրեց քարե պարսպով: Այդ վանքն անվանում են նաեւ «Ձիթենյաց»՝ ի պատիվ ձիթենու, որին կապել էին Փրկչին հարցաքննությունից առաջ: Այդ ծառի ընձյուղները վանքի բակում են, դրա պտուղները հրաշագործ են եւ մինչեւ օրս բուժում են կանանց ամլությունը: Սրբազան ծառից մի քանի մետրի վրա պատի մեջ որմնաշարված է խոր կտրվածքով մի մեծ քար: Դա մեկն է այն քարերի, որոնք աղաղակեցին, երբ Տերը հանդիսավորապես մտավ Երուսաղեմ:

Ըստ Սբ. Տաթեւացու (14-15-րդ դդ.) «Գիրք հարցմանց» աշխատության, կարելի է վերստեղծել հետեւյալ պատկերը. Հռոմից վերադառնալուց հետո Սբ. Գրիգորը որոշում է ծնկաչոք գնալ Երուսաղեմ: Հրեշտակը նրան թույլ չի տալիս, ասելով՝ «Բավական են քո տառապանքները», նկատի ունենալով դաժան կտտանքները եւ մահապարտների փոսում մնալը: Սբ. Գրիգորը գալիս է Երուսաղեմ եւ հետը բերում Սբ. Հովհաննես Մկրտչի մասունքները: Իրեն անարժան համարելով՝ նա անմիջապես չի այցելում Տիրոջ գերեզման, այլ իջնում է քարայրներ, որտեղ երկար ժամանակ՝ գրեթե յոթ տարի, անձնատուր է լինում աղոթքին եւ ծոմապահությանը: Այսօր այդ վայրը գտնվում է Սբ. Հարության (կամ Տիրոջ գերեզմանի) տաճարում, Սբ. Գրիգորի ստորին հայկական եկեղեցում:

Յոթ տարի անց Սբ. Գրիգորը Ավագ շաբաթ օրը այցելում է Տիրոջ գերեզման, որտեղ Տիրոջից խնդրում է, որ Լույս ճառագի ի նշան Նրա Հարության: Տերը լսում է նրա աղոթքները: Հրաշքով վառվում են բոլոր կանթեղներն ու մոմերը: Կատարված հրաշքի առթիվ Սբ. Գրիգորը երգում է «Լույս զվարթ»: Այդ երգեցողությունը մինչեւ օրս ամեն շաբաթ կատարվում է Հայաստանյայց Առաքելական եկեղեցում: Այնուհետեւ Սբ. Գրիգորը Տիրոջից խնդրում է, որ Նա ամեն Ավագ շաբաթ ի փառս Իր Հարության վառի կանթեղներն անտեսանելի լույսով: Այդ նշանակը տեղի է ունենում մինչեւ օրս, եւ դա տեսանելի է միայն հավատի աչքով: Ուստիեւ Սբ. Գրիգորը Լուսավորիչ կոչվեց ոչ միայն իբրեւ հայ ժողովրդի լուսավորիչ, այլեւ Տիրոջ գերեզմանի մոտ կատարված հրաշքի պատճառով:

➩9

AZG NEW SHABAT 1.QXD 22/12/2016 21:57 Page 9



# Ով սպանեց ռուս դեսպանին

*Պատասխանատվությունը ստանձնեց «Ջեյշ ալ-Փաթիը»*



Անկարայում, դեկտեմբերի 19-ի երեկոյան, ժամանակակից արվեստի կենտրոնում գեղարվեստական լուսանկարչության ցուցահանդեսի բացման ժամանակ կատարվեց զինված հարձակում Թուրքիայում Ռուսաստանի դեսպան Անդրեյ Կառլովի վրա: Hurriyet թերթի տեղեկացմամբ, ելույթի համար ամբիոնին մոտեցած դեսպանն ատրճանակից ծանր վիրավորվել է եւ հիվանդանոցի ճանապարհին մահացել: «Ռուսաստանն ու Թուրքիան անպայման վրեժ կլուծեն ռուս դեսպան Անդրեյ Կառլովի սպանության համար», հայտարարել է Անկարայի քաղաքապետ **Իբրահիմ Մելիխ Գյոքչեքը** NTV-ի հեռուստաեթերում:

Ահաբեկիչը եղել է ոստիկանի համազգեստով եւ պատկերասրահի շենք մտնելիս ներկայացրել է ոստիկանի վկայական: «Սպուտնիկ» ռադիոկայանի տվյալներով, անցած հուլիսի դեպքերից հետո նրան հեռացրել էին ոստիկանությունից, բայց Թուրքիայում տարածված կոռուպցիայի պայմաններում վկայական պահելը կամ նորը ճարելը խնդիր չէ: Հարձակումից հետո մյուս ոստիկանների հետ ծավալված փոխհրաձգության ժամանակ ահաբեկիչը սպանվել է: Նրա անունը Մերթ Ալթընթաշ է:

ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ **Մարիա Զախարովան** հանրությանը կոչ է արել «կողմնորոշվել ԱԳՆ-ից կամ Թուրքիայի դեսպանատնից ստացվող տեղեկատվությամբ»: Մոսկվան ռուս դեսպանի սպանությունը որակել է ահաբեկչություն:

Թուրքիայում վերջերս լուրեր էին պտտվում, թե երկրի ապակայունացման նպատակով իբր նախապատրաստվում է մահափորձ նախագահ Էրդողանի դեմ: Էրդողանը երկրի քաղաքացիներին հորդորել էր միավորվել բոլոր ահաբեկչական կազմակերպությունների դեմ պայքարելու համար: Սակայն ահաբեկիչների հերթական թիրախը դարձավ ՌԴ դեսպանը: Ինչո՞ւ:

Այս կապակցությամբ աչքի են զարնում որոշ հարակից հանգամանքներ:

Թուրքիայի արտգործնախարար **Մեւլութ Չավուշօղլուն** նախօրեին հերքել էր արեւմտյան եւ որոշ թուրքական ԶԼՄ-ների այն հաղորդումը, թե «Թուրքիան եւ Ռուսաստանը ինչ-որ գաղտնի գործարք են կնքել Սիրիայի վերաբերյալ»: Չավուշօղլուի խոսքերով՝ «ռուսները առաջարկել են, որ Թուրքիան, Ռուսաստանը եւ Իրանը միավորվեն առանձնապես Հալեպի հարցում, որպեսզի հետագայում դա թերեւս տարածվի Սիրիայի նաեւ մյուս մասերի վրա»: Ավելին, Չավուշօղլուն դեկտեմբերի 20-ին Մոսկվա մեկնեց, որպեսզի մասնակցի Ռուսաստանի, Թուրքիայի եւ Իրանի արտգործնախարարների հանդիպմանը, որի օրակարգում էին Սիրիայի եւ մասնավորապես Հալեպի կացության հետ կապված հարցեր: Ռուսաստանցի պատմաբան **Ստանիսլավ Տարասովը** չի բացառում, որ Անկարայում դեսպան Կառլովի սպանությունը միտված լինի սկսված բանակցությունների ձախողմանը:

Ամերիկյան Foreign Policy հրատարակության լրագրողներ **Ռոբբի Գրեյմերը** եւ **Էմիլի Տամկինը** անդրադառնում են առանց այդ էլ բարդ Մոսկվա-Անկարա հարաբերությունների հնարավոր զարգացումներին:

Նախ եւ առաջ, չի բացառվում ռուսաստանցի ցանցահենների գրոհ թուրքական ցանցերի վրա, ինչը կարող է Թուրքիայում առաջ բերել քաղաքական անկայունություն: Օրինակ, ավելի վաղ WikiLeaks-ը հրապարակել էր նախագահ Էրդողանի փեսա, էներգետիկայի եւ բնապաշարների նախարար Բերաթ Ալբայրաքի 57 հազար էլեկտրոնային նամակները:

Երկրորդ, ռուս-թուրքական տնտեսական կապերը կարող են վերստին սառեցվել: 2015-ի նոյեմբերին Սիրիայում ռուսական ռազմօդանավի ոչնչացումից հետո թուրքական ապրանքների ներմուծումը կրճատվեց 737 մլն դոլարով:

Երրորդ, դեսպանի սպանությունը կարող է իբրեւ պատրվակ օգտագործվել Թուրքիայում, ինչպես նաեւ ՌԴ-ում բռնարարքների սաստկացման համար:

Չորրորդ, դեսպանի սպանությունը կարող է ի չիք դարձնել Հալեպում հաստատված անկայուն հրադադարի ռեժիմը:

Վերջապես, առկա է վտանգ, որ Մոսկվան կօգտագործի քրդական խաղաքարտը, որի հետեւանքով Թուրքիայում ահաբեկչությունները կդառնան առավել հաճախակի, գրում է ամերիկյան հրատարակությունը:

Սակայն վերջինս չի խոսում մի էական «մանրուքի» մասին: Սպանության նախօրեին լիովին ազատագրված Արեւելյան Հալեպում նախագահ Ասադի զորքերը գերի էին վերցրել ՆԱՏՕ-ի առնվազն 14 բարձրաստիճան զինվորական հրահանգիչների, որոնց գոյությունը գաղտնի էր պահվում, եւ որոնք ուղղորդում էին այսպես կոչված «չափավոր ընդդիմության» գործողությունները սիրիական բանակի եւ խաղաղ բնակչության դեմ: Դիվանագիտական սկանդալը դեռ չի պայթել, սակայն իրավագիտության դոկտոր **Անդրեյ Սամոյլոն** «Սպուտնիկ» ռադիոկայանին տված հարցազրույցում կարծիք է հայտնել, թե հաջորդ օրն իսկ Անկարայում ռուս դեսպանի սպանությունը կարող էր լինել ՆԱՏՕ-ի որոշ երկրների վրեժխնդրության քողարկված դրսեւորում եւ հընթացս Մերձավոր Արեւելքում լարվածության մի նոր պատճառ: Որոշ հաղորդումների համաձայն, թուրք մարդասպանը դեսպանի վրա կրակ բացելուց առաջ բղավել է, թե Ռուսաստանը «կվճարի Հալեպի համար»:

Սամոյլոյի վարկածը առավել համոզիչ է թվում նաեւ այն առումով, որ վերջին օրերին Արեւմուտքը Հալեպի մարտերին անդրադառնալիս սկսել էր հաճախ խոսել մարդասիրական վերաբերմունքի եւ նոր հրադադարի «անհրաժեշտության» մասին, որը հնարավորություն կտար տարհանել եւ թաքցնել ՆԱՏՕ-ի բարձրաստիճան հրահանգիչներին:

ՌԴ Մերձավոր Արեւելքի ինստիտուտի տնօրեն **Եվգենի Սատանովսկին** կարծում է, որ ահաբեկչությունը կազմակերպած ծայրահեղականների նպատակը Սիրիայում հաշտության գործընթացի խափանումն է: Մյուս ակնհայտ նպատակը ռուս-թուրքական հարաբերությունների կարգավորում թույլ չտալն է: Ի դեպ, «Իզվեստիա» թերթին հայտնի է դարձել, որ Մոսկվան հետաձգել է Թուրքիայի հետ անվիզային ռեժիմի հաստատումը: Անկարան մեղադրվում է ռուս դեսպանի պատշաճ պաշտպանությունն ապահոված չլինելու մեջ: ԱՄՆ պետքարտուղար **Ջոն Քերրին** սպանության հետաքննության գործում Թուրքիային աջակցելու պատրաստակամություն է հայտնել: Իսկ Պետդեպարտամենտի պաշտոնական ներկայացուցիչ **Ջիմ Քիրբին**, թերեւս նկատի ունենալով Ֆեթուլլահ Գյուլենի հետ կապված թուրքական հնարավոր մեղադրանքները, արդեն հայտարարել է, թե իր երկիրը «մեղսակից չէ» ռուս դեսպանի սպանությանը:

Դարձյալ դեկտեմբերի 19-ի երեկոյան Բեռլինի տարեվերջյան տոնավաճառներից մեկում մի բեռնատար ավտոմեքենա սպանեց 12 եւ վիրավորեց 50-ից ավելի անձանց: Ահաբեկչության պատասխանատվությունը ստանձնեց «Իսլամական պետությունը»: Անկարայի սպանության պատասխանատվությունը դեկտեմբերի 21-ին ստանձնեց ելուզակային խմբավորումների «Ջեյշ ալ-Ֆաթհ» («Նվաճման բանակ») կոալիցիան: Այդ մասին հաղորդում է ՌԻԱ գործակալությունը, վկայակոչելով «Աս-Սումարիա» հեռուստաալիքին: «Ջեյշ ալ-Ֆաթհի» կազմի մեջ մտնում է մասնավորապես ահաբեկչական «Ան-Նուսրա» ճակատը: Թուրքական Milliyet թերթը հավելում է, որ իրավապահ մարմինների աշխատակիցները ահաբեկիչ Մերթ Ալթընթաշի հյուրանոցային համարում գտել են «Ալ-Ղաիդայի» եւ թուրք ընդդիմադիր իսլամիստ քարոզիչ Ֆեթուլլահ Գյուլենի FETO կազմակերպության մասին պատմող գրքեր: Հայտնաբերվել են նաեւ Ալթընթաշի գրառումները ջիհադի եւ «Ալ-Ղաիդայի» մասին: Ակնհայտ է, որ ահաբեկչությունն ուղղված է ռուս-թուրքական մերձեցման եւ Սիրիայում խաղաղության հաստատման դեմ: Ի դեպ, նախատեսված է Ռուսաստանի, Թուրքիայի եւ Իրանի միջնորդությամբ ղազախական Աստանայում անցկացնել Ասադի կառավարության եւ սիրիական ընդդիմության նախնական բանակցություն:

**Պ. Ք.**

# Հայաստանյայց Առաքելական եկեղեցին Ավետյաց երկրում

⇨8

Տաճարում շատ է հայկականը: Հայկական բազմաթիվ խաչեր են փորագրվել պատերի վրա: Ինձ թվում էր, թե այդ խաչերը հանուն սեփական հավատքի սպանված հայերի հոգիներն են, որոնք բոլոր կողմերից նայում եւ կանչում էին ինձ: Աչքերիցս ակամա արցունքներ էին գլորվում: Ես չէի կարողանում հասկանալ, թե ինձ հետ ինչ է կատարվում, եւ որքան երկար էի մնում տաճարում, այնքան ուժգին էր լսվում կանչը: Մի կողմից վախենում էի եւ ուզում էի փախչել, ոտքերս իրենք էին ինձ տանում տաճարի միջով: Սիրտս սկսեց թպրտալ. ինձ թվում էր, թե բոլոր հայ նահատակները եւ բոլոր սրբերը նայում են ինձ: Այստեղ սարկավագները հերթով խնկարկում էին ամբողջ տաճարը: Նախ հույնը, ապա հայը եւ հետո կաթոլիկը: Քիչ անց մենք կանգնած էինք հայկական կցաշենքում, այն տեղում, որտեղ Տիրամայրը ուշաթափվեց, տեսնելով խաչված Որդուն:

Գրիգոր Լուսավորիչը գիտակցեց սրբավայրերի կարեւորությունը մեր ժողովրդի համար եւ նպաստեց այն բանին, որպեսզի այստեղ եկեղեցիներ հիմնադրվեն հանուն հայ ժողովրդի փրկության: Ուստի վանական եղբայրությունը ստիպված է կրծքով պաշտպանել սուրբ վայրերում մեր արտոնությունները, պաշտպանել մշտական ներկայությամբ եւ արարողություններով, որպեսզի մեր ուխտավորները հանգիստ աղոթեն, չվախենալով, որ վաղը կարող են իրենց թույլ չտալ մասնակցելու ժամերգությանը լոկ այն պատճառով, որ իրենք Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ծխականներ են: Ամեն Աստծո օր ու գիշեր պատարագ է մատուցվում Սուրբ վայրերում: Գիշերվա ժամը 3-ին պատարագ Տիրոջ գերեզմանի վրա, առավոտյան ժամը 8-ին՝ Տիրամոր գերեզմանի վրա եւ Բեթղեհեմում, չնայած մյուս ամենօրյա արարողությունները:

Վերեւում ասվածը գուցե ընթերցողների տարակուսանքը հարուցի: Բայց ես ականատես եմ եղել, թե ինչպես իմ ծանոթները վրդովվում էին Հայաստանյայց Առաքելական եկեղեցու եւ հույների վեճերից. «Քահանաները խելքները թռցրել են: Ի՞նչ տարբերություն, թե ով ումից հետո կմտնի, որտեղ կկանգնի: Դե ամեն ինչ տվեք հույներին, իսկ ինքներդ մեկնեք Հայաստան. ինչ է, այնտեղ քի՞չ եկեղեցիներ կան....»: Ինձ թվում է՝ ամեն ինչ շատ ավելի բարդ է: Պատմությունը ցույց է տալիս. եթե փոքր բաներում հավասարիմ չլինենք, հետո շատ կկորցնենք, եթե փոքրը բաց թողնենք, ապա ոտնձգություն կանեն ավելի մեծի դեմ: Այդպիսով Հայ եկեղեցին կարող է կորցնել շատ սրբավայրեր, որոնց համար արյուն են թափել մեր հայրերը: Օրինակ, հույները հայերից մշտապես պահանջում են ենթարկվել Զատկի օրվա որոշման իրենց հաշվարկներին: Եթե Հայաստանյայց եկեղեցու հոտը կազմում են հայերը, ապա հույն հոգեւորականությունը խնդիր ունի պահպանելու այն բազմազգ հոտի ղեկավարման իր նկրտումները, որի հիմքը կազմում են արաբները: Ուստի հույն հոգեւորականությունը Զատկի տոնին լույսի հրաշափառ էջքի դեպքերը միշտ ջանում է վերագրել բացառապես իր աղոթքներին: Երբ հայերը առանձին էին տոնում Զատիկը, լույսն իջնում էր հայոց պատրիարքի եւ հավատացյալների աղոթքով: Դա վնասում է լույսի էջքի հարցում հույն կղերականության մենատիրության առասպելին, որը հույները ջանում են ներշնչել ուղղափառ հավատացյալներին եւ շարունակում են ներշնչել մինչեւ օրս:

Մանրուքները երբեմն թվում են աննշան, բայց այստեղ՝ Սուրբ վայրերում, ամեն ինչ ունի նշանակություն: Հայկական եկեղեցու ավագ քահանա Ղեւոնդ Հովհաննիսյանը մեզ ասաց. «Սուրբ երկրում Հայաստանյայց Առաքելական եկեղեցին ունի նույնքան ծանրակշիռ իրավունքներ, որքան կաթոլիկները, ուղղափառները, հույները: Նրանց օգնում են հզոր տերություններ, իսկ մեր հույսը Ինքը՝ Տերն է, եւ ինչպես ցույց է տվել պատմությունը, առանց Տիրոջ օգնության հայերը վաղուց անհետացած կլինեին Սուրբ երկրից: Մենք պետք է դա հիշենք ամենուրեք եւ առաջին հերթին Երուսաղեմում: Մի՛ մոռացեք Երուսաղեմը հանուն մեր ժողովրդի, օգնեցեք Սբ. Աթոռին, որը կարոտ է ձեր ինչպես ֆինանսական, այնպես էլ բարոյական, աղոթքային աջակցությանը, իսկ որ գլխավորն է՝ ձեր ներկայությանը: Մի՛ մոռացեք, որ Երուսաղեմի Սբ. Աթոռը դարեր շարունակ կանգուն է մնացել մեր ժողովրդի զոհողությունների, հոգեւորականության եւ բազմաթիվ ուխտավորների մշտական ներկայության շնորհիվ: Ուստի Սբ. Աթոռի համար ամենքս պատասխանատու ենք Աստծո եւ Սբ. Գրիգոր Լուսավորչի առջեւ: Երանի նրան, ով հիշատակ ունի Սիոնում»:

Հիրավի, հավիտյանս հավիտենից երբեք չի մոռացվի այն, ինչը երբեւէ ցնցում է պատճառել:

**Ռուս. թարգմ. Պ. Ք.**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

# Թուրքերի հիմնազուրկ գանգատը Բունդեսթագի բանաձեւի դեմ

Դեկտեմբերի 19-ին գերմանական մամուլն առանց «զգացմունքների» արձանագրեց` Գերմանիայի սահմանադրական դատարանը մերժել է Բունդեսթագի հունիսի 2-ին Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւի վերաբերյալ 8 թուրքերի գանգատը` պատճառաբանելով, թե դիմումատուները չեն կարողացել հիմնավորել իրենց հիմնական իրավունքների խախտումը, եւ բացի այդ` դատարանն էլ նման իրավախախտման հնարավորություն չի տեսնում: Բողոք ներկայացրած 8 թուրքերի մի մասը, ինչպես ծանուցում են գերմանական աղբյուրները, գերմանաբնակ են:

Գերմանական մամուլը, Կառլսռուհեի դատարանի վճռին անդրադառնալով, հպանցիկ հիշեցնում էր, թե Բունդեսթագի բանաձեւից հետո Գերմանիա - Թուրքիա դիվանագիտական հարաբերությունները ծայրաստիճան լարվեցին, դեսպանները ետկանչվեցին: Անկարայում 4 ամիս մնալուց հետո Բեռլինում 2012-ից պաշտոնավարած Թուրքիայի դեսպան Կարսլիօղլին վերադարձավ Բեռլին, բայց դրանից հետո` նոյեմբերի 16-ին, նրան նույն պաշտոնում փոխարինեց ավելի երիտասարդ` 1965-ին ծնված Ալի Քեմալ Այդինը: Միգուցե ժխտողականության մոլախոտը Գերմանիայում բազմացնելու թա՞րմ ջանքեր են հարկավոր, ո՞վ գիտե:

Հունիսի 2-ին Բունդեսթագի պատգամավորների ճնշող մեծամասնության քվեն ստացած Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւի մասին մասնավոր զրույցներում կային նաեւ դժգոհ կարծիքներ, որ այն ուժեղ փաստաթուղթ չէ: Երբ Թուրքիայի Ինջիռլիք ռազմակայան այցելելու արտոնություն ստանալը գերմանացի պատգամավորների համար դարձավ անլուծելի, սեպտեմբերին գտնվեց ելքը` քաղաքականացնել Բունդեսթագի իրավական, պատմական, նաեւ բարոյական արժեք ունեցող փաստաթուղթը: (Թեպետ մեր կարծիքով, այն նաեւ առաջին հերթին` քաղաքական ուղերձ, պարտադրանք ունի- **Ան.Հ.**): ԳԴՀ կառավարության խոսնակ **Զայբերտը** հայտարարեց, թե Բունդեսթագի հայկական բանաձեւը գործադիր իշխանության համար պարտադիր բնույթ չունի: ԳԴՀ բարձրագույն դատական ատյանը` Դաշնային Սահմանադրական դատարանը այժմ մերժել է 8 թուրքերի գանգատը վարույթ ընդունել, քանի որ դիմումատուների պատճառաբանությունը իրենց հիմնական իրավունքների վերաբերյալ բավարար ու համոզիչ չի եղել: Բունդեսթագի բանաձեւն ամո՞ւր ձեւակերպված փաստաթուղթ է, թե՞ սողանցքները լավ ուսումնասիրելու պարագայում կարելի է նաեւ նորից բողոքարկել ու... նաեւ` քաղաքական քամիների հոսանքի բերանն ընկած` ինչու չէ, հաջողության հասնել: Բնավ կասկածի տակ չառնելով գերմանական դատական այս ատյանի անաչառությունը, բայց նաեւ չմոռանալով այն հանգամանքը, որ թուրքերը նպատակասլաց են իրենց քաղաքական իղձերի ու պահանջների իրականացման ճանապարհին, միանգամայն հնարավոր ենք համարում, որ նրանք էլի են փորձելու: Ինչպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2014-ին հաստատած հայկական լավաշի պարագայում տեսանք ու համոզվեցինք վերջերս` 2016-ի նոյեմբերի 30-ին, որ թուրք-ադրբեջանական անդուլ ջանքերը եվրոպական «հանդուրժողականության» ամպհովանին առած չեն փոշիանում. Նույն մարմինը հաստատեց նաեւ Ադրբեջանի, Թուրքիայի եւ ուրիշների համատեղ` համարյա նույնանուն հայտը, ինչի մասին գրել ենք հանգամանալից «Ազգի» դեկտեմբերի 2-ի համարում:

Սահմանադրագետ, Հագենի համալսարանի դասախոս **Գոռ Հովհաննիսյանը** մեզ հետ հեռախոսազրույցում ունկնդիր լինելով մեր մտահոգություններին, նախ անդրադարձավ ԳԴՀ կառավարության վերոհիշյալ հայտնի պատճառաբանությանը: Հովհաննիսյանը հղում արեց Գերմանիայի սահմանադրությանը` օրենսդիր իշխանությունը կաշկանդված է սահմանադրությամբ, կառավարությունը` օրենքով, գործադիր իշխանության համար Բունդեսթագի ընդունած ակտերը պարտադիր են: Իսկ սահմանադրական դատարանի որոշման մասին էլ հստակեցրեց, թե դիմումնատուն չի կարողացել համոզիչ ներկայացնել, թե իր իրավունքն ինչպես է խախտվել: Պատճառն այն է, որ Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւը նորմատիվ ակտ չէ, այն ընդհանուր եւ վերացական իրավակարգավորումներ չի պարունակում, ասում է Հովհաննիսյանը: Բեռլինաբնակ մեր զրուցակիցն իհարկե չի բացառում, որ արտազգային ուրիշներ կարող են դատարան դիմել, թեպետ Բունդեսթագի հաստատած փաստաթուղթն անմիջականորեն չի շոշափում որեւէ մեկի հիմնական իրավունքները:

ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆ

Տիթրոյթ

# Մեծ Երազի Ճամբուն Ուղեւորը
# Գերսամ Ահարոնեան

Հեռաւոր հորիզոնին վրայ տակաւին չուրուագծուած «Մեծ Երազը»` ահա՛ կ՚իյնար Մեծ Երազողը: Ափսո՛ս` այդ Երազին եւ ափսոս` Մեծ Երազողին:

Իրապաշտ ու կեանքի կարծր իրականութեանց գիտակ մարդն էր Գերսամ Ահարոնեանը, որ գիտէր նաեւ երազե՜լ, երազել իր ազգին մեծ երազը:

Ծնած էր աքսորի ճամբուն վրայ, Մարաշի մէջ, սակայն ոչ ոքի կը զիջէր տիրութիւնը Զէյթունի արծուեբոյնին, ուր իր նախահայրերը դարաւոր գոյամարտ մղած էին ոսոխին դէմ ու դրօշի նման բարձր պահած` ցեղին ազատութեան ոգին: Աքսորի ճամբուն վրայ իր միակ ժառանգութիւնը եղաւ այդ անվեհեր ոգին, որ աճեցաւ իր մէջ, որ ապրեցա՛ւ իր մէջ, ու իրմէ անդին:

Բնութիւնը շռայլ գտնուած էր Գերսամ Ահարոնեանի նկատմամբ. թիկնեղ հասակ, խաժ ու թափանցող աչքեր, եւ արտակարգօրէն պայծառ միտք. ու ինք բնութեան այդ շռայլ բարիքներուն գիտակ, միշտ իր ուսերուն վրայ կը կրէր անոնց հպարտութիւնը... վրդովելու աստիճան շատերը:

Գրեթէ ինքնուս մարդ մըն էր ան. սակայն համալսարանական տիտղոսները ոչինչ պիտի կրնային աւելցնել իր գիտութեան վրայ, եւ ընդհակառակն, գուցէ տիտղոսին համապատասխան «սովորական»ին համեմատութեան պիտի զեղչէին իր գիտութեան հմայքը: Յաճախ նսեմացուցած էր ան տիտղոսաւորները իր միտքին լայն հորիզոնով, անսահման պաշարով եւ վերլուծելու խորաթափանց կարողութիւններով:

Փայլուն մարզիկ մը եղած էր ան երիտասարդութեան, եւ իր ամբողջ կեանքի տեւողութեան մարզիկի իր արիութիւնը ընկերացաւ իրեն ազգային-քաղաքական կեանքին մէջ: Արհամարհողը չէր սալոնային պերճանքները, սակայն գիտէր նաեւ զանգուածին հետ ըլլալ ու զանգուածները շարժե՛լ: Իր ժողովուրդին իսկական զաւակն էր ան:

Իր օրով էր որ լիբանանահայ կեանքը սկսաւ իրագործել իր մշակութային կրթողային ձեռնարկները, որոնց արձագանգները տարածուեցան Երեւանէն մինչեւ հեռաւոր ծագերն աշխարհի:

Հոգեկան անսպառ ուժերով օժտուած, աշխատելու անսահման ախորժակով գաղափարական առաջնորդն էր ան, որ իր տեսիլքին հզօրութեամբ, անձին կախարդանքով եւ անձնական համոզումներուն խորութեամբ, կը շարժէր իր ամբողջ շրջանակը եւ յաջողութենէ յաջողութիւն կ՚առաջնորդէր զայն:

Բազմակողմանի ու բազմատաղանդ անձնաւորութիւն մը եղաւ ան. եւ ինչ որ ըրաւ` իր ըրածը պսակեց շքեղագոյնին փայլով:

Ան իբրեւ ուսուցիչ մտաւ կեանքի ասպարէզ. կը դասաւանդէր ազգային պատմութիւն, Աշխարհի եւ Հայաստանի աշխարհագրութիւն եւ ընդհանուր պատմութիւն: Դասագիրքը չէր անոր ուղեցոյցը. որովհետեւ ինքն էր դասագիրքը իր խորունկ գիտելիքներով ու յաւերժօրէն ճշմարիտը որոնող իր միտքով: Հայաստանի աշխարհագրութիւնը մանաւանդ «իր ափին պէս գիտէր» ու կը հմայէր իր աշակերտները իր ճշգրտութեամբ եւ իր միտքի անսահման հորիզոնով:

Յաջորդական սերունդներ, որոնք իր շունչով դաստիարակուեցան, ոչ միայն սորվեցան մեր ազգային պատմութիւնը, այլեւ ապրեցան զայն: Անոր առաջնորդութեամբ անոնք քալեցին պատմութեան արիւնոտ բաւիղներէն, նիզակահար եղան Վարդաններու կողքին, քար առ քար կերտեցին Գլաձորներն ու Սանահինները, վրէժի ցասմամբ բարձրացան Ղարաբաղի, Զէյթունի ու Շապին Գարահիսարի լեռները, եւ հայոց պատմութիւնը` գիտութենէ աւելի` իբրեւ պատգա՛մ մնաց եւ արձագանգեց անոնց հոգիներուն մէջ:

Ահարոնեանի նախասիրած պատգամներէն մէկը- զոր յաճախ կը կրկնէր իր հրապարակային դասախօսութեանց ընթացքին- սա խռովիչ ու դիւթիչ կարգախօսն էր.- «Հրեաները երկու հազար տարի իրարու մաղթեցին «Գալ տարի` Երուսաղէմի մէջ», իսկ մեր մաղթանքը պէտք է ըլլայ` «Գալ տարի` Վանի մէջ», ու պէտք է կրկնենք այս մաղթանքը, եթէ հարկ է` հազար տարի, կամ նոյնիսկ` երկու հազար տարի, մինչեւ որ ուրարտական աւերուած հին Վան-Տոսպի մէջ վերականգնի հայութեան ամբողջական ու «Մեծ Երազը»:

Այսօր, Գերսամ Ահարոնեանի յիշատակը յաւերժացնելու ազնուագոյն կերպը այդ կարգախօսին համազգային մակարդակով որդեգրումն ու մանաւանդ` իրականացո՛ւմն է:

Հասարակական խիզախ առաջնորդի իր խմորին շաղուած էր աշխարհի անցուդարձներուն եւ ալեկոծումներուն իրազեկ մեծ խմբագրի խառնուածքը: Իր խմբագրութեամբ, Պէյրութի «Զարթօնք» օրաթերթը դարձաւ սփիւռքահայ մամուլի ամէնէն պատկառելի ձայնը- անկէ է որ կը սփռուէին ազգային վերջին իրադարձութիւնները. «Զարթօնք»ի խմբագրականներով կը վճռուէին զանգուածներուն որոշումներն ու արարքները:

Սակաւաթիւ են այն խմբագիրները, որոնք կարողացան Ահարոնեանին չափ պատկառանք ներշնչել ընթերցող հասարակութեան եւ բարձրանալ պաշտամունքի պատուանդանին:

Միտքի անօրինակ կարգապահութեան տէր մտաւորական մըն էր ան. երբ ոտքի կանգնէր` կրնար առանց նոթի ժամերով խօսիլ ազգային պատմութեան մասին թուականներով, վայրերով եւ պատմական սքանչելի կառոյցով:

Հիացողներու պնդումին վրայ էր որ խմբագրականներու շարք մը վերածեց Հայկական դատի մասին իր հմտալի դասախօսութիւնները, որոնք ետքէն լոյս տեսան «Մեծ Երազի Ճամբուն Վրայ» գրաւիչ վերնագրով հատորին մէջ: Հատորին յաջորդական տպագրութիւնները յափշտակուեցան համայն գաղութահայութեան կողմէ:

Համալսարաններու ամբիոններէն մանրադէտով ծանօթագրութիւն (ֆութնոթ) փնտռող պատմաբանները հաւանաբար յուսախաբ մնացին այդ հատորէն: Սակայն այդ գործը դարձաւ ու մնաց Հայկական դատի առձեռն ուղեցոյցը ժողովուրդին համար: Գրուած պիրկ եւ ուժական ոճով, վերլուծական ընդհանրացումներով ու մանաւանդ` պատմութեան մռայլ ծալքերէն պոռթկացող ահեղագոռ պատգամներով: Գերսամ Ահարոնեան գիտէր պատմութիւնը խօսեցնե՛լ, ու հոսեցնել զայն` դարերու զառիթափէն ի վար ու դիւցազնական դրուագներով բռնկեցնել ժողովուրդին երեւակայութիւնը:

Եթէ Եղեռնի Յիսնամեակի ոգեկոչումները անկիւնադարձ մը հանդիսացան արդի ժամանակներու մէջ Հայկական դատի վերարծարծման, անկասկած Գերսամ Ահարոնեանի խմբագրած «Եղեռնի Յուշամատեան»ը վկայակոչեց այդ անկիւնադարձին ամէնէն կոթողային իրագործումներէն մէկը, որ անսպառ նիւթ հայթայթեց ու կը շարունակէ հայթայթել թէ՛ հասարակ ընթերցողին ու թէ՛ մանրախոյզ գիտնականին:

Այս շարքին պսակումը եղաւ իր «Խոնհեր Յիսնամեակի աւարտին» եզրափակիչ գործը, որ նոյնպէս ջերմօրէն ընդունուեցաւ ընթերցող հասարակութենէն:

Այդ հատորը կ՚անդրադառնար ժողովուրդի պատմական հզօր պոռթկումին, ան նոյնպէս կը նախագծէր Հայկական դատի անշեղ ուղին, որուն անկասկած պիտի հետեւին գալիք սերունդները, մինչեւ Գերսամ Ահարոնեանին ու մեր Երազին իրականացումը:



Լիբանանի քաղաքացիական պատերազմը, որ ցնցեց հիմերը հայ գաղութին ու գաղութահայութեան` ահաւոր կերպով անդրադարձաւ Գերսամ Ահարոնեանի հոգեկան ու ֆիզիքական աշխարհին վրայ: Ինք որ ճարտարապետներէն մէկը եղած էր Լիբանանի ազգային, մշակութային, կրթական ու մտաւորական կեանքի կառոյցին` իր աչքերուն առջեւ կը տեսնէր փլուզումը իր ձեռակերտին: Ինք որ արժանապատուութեան վսեմ գաղափարներով եւ հոգեկան անօրինակ արիութեամբ ապրած էր, նոյնիսկ գեհենի ճամբաներուն վրայ, դառնացաւ կեանքէն ու աշխարհէն, երբ տեսաւ թէ ամէնէն արժանաւոր մտաւորականին կեանքը փողոցային լակոտի մը անգիտակից փամփուշտին արժէքին հաւասարեցաւ, ու գաղափարական քաջութիւնը` ծաղրանկարի մը վերածուեցաւ լիբանանահայութեան վիճակուած այլանդակ կեանքին մէջ: Ան կծկուեցաւ ինքն իր մէջ, վանդակի կաշկանդումներուն համակերպած արծուի մը պէս, որուն հոգին միշտ մնաց Զէյթունի անառիկ լեռներուն վրայ, ու իր կրկին թռչելու ինքնավստահութիւնը` անխորտակելի կերպով մնաց այդ հոգիին մէջ:

Տակաւին ան տալիք ունէր հայ կեանքին, մեր մտաւորական ժառանգութեան, ու մեր երիտասարդութեան` մա՛նաւանդ շատ ծրագիրներ ունէր, զորս իրեն հետ տարաւ, անաւարտ ու աշխարհին չյայտնուած:

Իր տխրութեան, հոգեկան ու ֆիզիքական փլուզումին մէջ ան վստահաբար ունեցաւ անսահման մխիթարութիւնը` իր մահէն կարճ ժամանակ մը առաջ հայրենիք այցելելու:

Հայրենիքը գաղափարաբանութիւն չէր իրեն համար, այլ հայոց պատմութեան մէկ իրապաշտ պատգամը` նետուած մեր ցեղին դժխեմ ճակատագրի երեսին: Վերածնած Հայաստանի ժողովուրդին ու հողին մէջ ան կը տեսնէր անխորտակելի հիմնաքարը մեր ազգային դատին, մեր Մե՛ծ երազին: Ան շուրջ ամիս մը մնաց Հայաստան, իր հոգիին ու սիրտին վէրքերը դարմանելու այնտեղ` Երեւանի ու Սեւանի ջուրերուն մէջ, զրոյցի նստելու Արարատ նահապետին հետ, եւ յանուն իրեն ու յանուն գալիք բոլոր սերունդներուն, անոր ականջին պատգամելու` «Գալ տարի` Վանի մէջ»:

Եւ այնուհետեւ, ի՜նչ փոյթ որ ալ կ՚իյնար Մեծ ուղեւորը` իր Մեծ երազի ճամփուն վրայ....:

**1981, Տիթրոյթ**

AZG NEW SHABAT 1.QXD 22/12/2016 21:57 Page 11



# ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ, ք. Երեւան, Ագաթանգեղոս 6/1 հասցեում 2017թ.-ի հունվարի 10-ից իրականացվելու են Երեւանի «Ադամանդ» ԵԱՀԲ ՓԲ ընկերության (այսուհետ` կազմակերպիչ) կողմից կազմակերպված բաց աճուրդները: Աճուրդների ընթացքում վաճառվելու է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ` Բանկ) կողմից ներկայացված գույքաիրավական համալիրի` ակտիվների (գույքային իրավունքի), որպես մեկ միասնական լոտ, գնման իրավունքը: Վաճառքի ներկայացված լոտը բաղկացած է ստորեւ թվարկված իրավունքներից եւ գույքերից.

ա) «Միկա Լիմիթեդ» ընկերության նկատմամբ Բանկի պահանջի իրավունքների մի մասը, որը բխում է 09.06.2010թ. N053 Վարկային գծի տրամադրման պայմանագրից (ներառող բոլոր հետագա փոփոխությունները, լրացումները եւ վերաշարադրանքները), ապագայում հաշվարկվող տույժերը եւ տարեկան տոկոսները, դեբիտորական պարտքի հետ միասին, ինչպես նաեւ գրավի եւ երաշխավորության պայմանագրերից ծագող պահանջի իրավունքները, նշված սույն «ա» կետի 1-8 ենթակետերում, կնքված որպես ապահովում N 053 Վարկային պայմանագրի, եւ համապատասխանաբար արբիտրաժի, ընդհանուր իրավասության դատարանի որոշումներով եւ դրանց կատարողական թերթերով ստացված իրավունքների մասը, նշված սույն «ա» կետի 9 ենթակետում: Պահանջի իրավունքից հանված է եւ չի ներառում վարկի մայր գումարի մի մասը: Իրավունքները գրավասուներ «Մասակարար» ՍՊԸ-ի եւ «Միկա Քորպորեյշն» ՓԲԸ-ի գրավներով եւ վերը նշված պարտավորություններով որպես ապահովում տրամադրած «Միկա Քորպորեյշն» ՓԲԸ-ի երաշխավորությունը չեն վաճառվում եւ չեն փոխանցվում գնորդին:

1. Բանկի պահանջի իրավունքները «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ի նկատմամբ, որոնք բխում են 12.06.2013թ. N 053-06/13 Զ Անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) պայմանագրից եւ 23.07.2013թ. N 053-07/13 Զ Անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) պայմանագրից, որոնց շրջանակներում որպես 09.06.2010թ. N053 Վարկային գծի տրամադրման պայմանագրով (ներառող բոլոր հետագա փոփոխությունները, լրացումները եւ վերաշարադրանքները) «Միկա Լիմիթեդ» ընկերության պարտավորությունների ապահովում գրավ են դրվել «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ի անշարժ գույքերը, տեղակայված հետեւյալ հասցեներով.

❖ Կոտայքի մարզ, գյուղ Արտավազ, ջրամբարին հարող տարածք, ջրահավաքիչ կայան: Գրավադրված գույքը կազմված է շինություններից եւ կառույցներից, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 3226.98 քմ եւ 1.65 հա ընդհանուր մակերեսով հողամասից: Գրավների եւ սեփականության գրանցման վկայականները ներկայացված են;

❖ Կոտայքի մարզ, ք.Հրազդան, արտադրական գոտի, ջրամատակարարման տարողություններ: Գրավադրված գույքը կազմված է շինություններից եւ կառույցներից, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 1011.14 քմ եւ 0.4 հա ընդհանուր մակերեսով հողամասից: Գրավների եւ սեփականության գրանցման վկայականները ներկայացված են;

❖ Կոտայքի մարզ, ք.Հրազդան, արտադրական գոտի 14/17, մասնաշենք եւ անցարան: Գրավադրված գույքը կազմված է շենք-շինություններից, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 6866.2 քմ եւ 0.2614 հա ընդհանուր մակերեսով հողամասից: Գրավների եւ սեփականության գրանցման վկայականները ներկայացված են;

❖ Կոտայքի մարզ, ք.Հրազդան, արտադրական գոտի, ավտոպարկ: Գրավադրված գույքը կազմված է շենք-շինություններից, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 2900.63 քմ եւ 1.85 հա ընդհանուր մակերեսով հողամասից: Գրավների եւ սեփականության գրանցման վկայականները ներկայացված են;

❖ Կոտայքի մարզ, ք.Հրազդան, արտադրական գոտի, Գործարանային փող. N1, Ցեմենտի գործարան: Գրավադրված գույքը կազմված է շենք-շինություններից, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 57213.89 քմ եւ 55.05հա ընդհանուր մակերեսով հողամասից: Գրավների եւ սեփականության գրանցման վկայականները ներկայացված են:

2. Բանկի պահանջի իրավունքները «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ի նկատմամբ, որոնք բխում են 09.06.2010թ. N 053 Դ Շրջանառության մեջ գտնվող ապրանքի գրավի պայմանագրից, որի շրջանակներում որպես 09.06.2010թ. N053 Վարկային գծի տրամադրման պայմանագրով «Միկա Լիմիթեդ» ընկերության պարտավորությունների ապահովում գրավ է դրվել շրջանառության մեջ գտնվող ապրանքային կլինկերը 35,000 տոննա քանակությամբ, որոնց սեփականատերն է հանդիսանում «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ն: 22.07.2013թ. 07/13 Լրացուցիչ համաձայնագիրը (N 053 Վարկային պայմանագրի վերաշարադրում) կնքելուց հետո, տվյալ N 053 Դ գրավի պայմանագրի համապատասխան լրացուցիչ համաձայնագիր չի կնքվել, ինչպես նաեւ չի կնքվել հաջորդող գրավի պայմանագիր: Նշված N 053 Դ գրավի պայմանագիրը չի նշվել նաեւ արբիտրաժի որոշման մեջ այդ գույքի վրա բռնագանձում տարածելու մասով: Բանկը տվյալ գրավի պայմանագրով գրավի իրավունքի հնարավոր անվավերության համար պատասխանատվություն չի կրում:

3. Բանկի պահանջի իրավունքները «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ի նկատմամբ, որոնք բխում են 12.06.2013թ N053-06/13 Ե Շարժական գույքի գրավի պայմանագրից եւ 23.07.2013թ. N 053-07/13 Ե Շարժական գույքի հաջորդող գրավի պայմանագրից, որոնց շրջանակներում որպես 09.06.2010թ. N053 Վարկային գծի տրամադրման պայմանագրով (ներառող բոլոր հետագա փոփոխությունները, լրացումները եւ վերաշարադրանքները) «Միկա Լիմիթեդ» ընկերության պարտավորությունների ապահովում գրավ են դրվել «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ին պատկանող ստորեւ նշված շարժական գույքերը.

❖ N053-06/13 Ե պայմանագրով գրավ է դրվել 1181 անվանում շարժական գույք, ներառյալ տրանսպորտային միջոցներ եւ ռելսեր, իսկ

❖ N053-07/13 Ե պայմանագրով գրավ է դրվել 1166 անվանում շարժական գույք, ներառյալ տրանսպորտային միջոցներ եւ ռելսեր:

4. Բանկի պահանջի իրավունքները «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ի նկատմամբ, որոնք բխում են 13.10.2016թ. N 370/053/380 Ընդերքօգտագործման իրավունքի գրավի պայմանագրից, որի շրջանակներում որպես 09.06.2010թ. N053 Վարկային գծի տրամադրման պայմանագրով (ներառող բոլոր հետագա փոփոխությունները, լրացումները եւ վերաշարադրանքները) «Միկա Լիմիթեդ» ընկերության պարտավորությունների ապահովում գրավ են դրվել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքները, որոնց իրավատերն է հանդիսանում «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ն.

❖ 20.10.2012թ. տրված N ՇԱԹՎ-29/108 արդյունահանման թույլտվության հիման վրա: Տվյալ պահին թույլտվության ժամկետը լրացել է,

❖ 20.10.2012թ. տրված N ՇԱԹՎ-29/109 արդյունահանման թույլտվության հիման վրա: ժամկետը լրանում է 06.04.2017թ.-ին,

❖ 16.10.2013թ. N ՇԱԹՎ-29/483 արդյունահանման թույլտվության հիման վրա: ժամկետը լրանում է 20.10.2028թ.-ին:

5. Բանկի պահանջի իրավունքները «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ի նկատմամբ, որոնք բխում են 09.06.2010թ. N 053Ե Երաշխավորության պայմանագրից եւ 23.07.2013թ. N 053-07/13Է Երաշխավորության պայմանագրից, որոնց շրջանակներում որպես 09.06.2010թ. N053 Վարկային գծի տրամադրման պայմանագրով (ներառող բոլոր հետագա փոփոխությունները, լրացումները եւ վերաշարադրանքները) «Միկա Լիմիթեդ» ընկերության պարտավորությունների ապահովում տրամադրվել է «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ երաշխավորությունը:

6. Բանկի պահանջի իրավունքները Միխայիլ Բաղդասարովի նկատմամբ, որոնք բխում են 08.06.2013թ. N 053-06/13Բ Երաշխավորության պայմանագրից եւ 23.07.2013թ. N 053-07/13Բ Երաշխավորության պայմանագրից, որոնց շրջանակներում որպես 09.06.2010թ. N053 Վարկային գծի տրամադրման պայմանագրով (ներառող բոլոր հետագա փոփոխությունները, լրացումները եւ վերաշարադրանքները) «Միկա Լիմիթեդ» ընկերության պարտավորությունների ապահովում տրամադրվել է Միխայիլ Բաղդասարովի երաշխավորությունը:

7. Բանկի պահանջի իրավունքները «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ի նկատմամբ, որոնք բխում են 23.07.2013թ. N 053-07/13Դ Բանկային հաշիվների եւ դրամական միջոցների հաջորդող գրավի պայմանագրից, որի շրջանակներում որպես 09.06.2010թ. N053 Վարկային գծի տրամադրման պայմանագրով (ներառող բոլոր հետագա փոփոխությունները, լրացումները եւ վերաշարադրանքները) «Միկա Լիմիթեդ» ընկերության պարտավորությունների ապահովում գրավ են դրվել «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ի բանկային հաշիվներից դրամական միջոցների ստացման, փոխանցման եւ այլ կարգով տնօրինման իրավունքները:

8. Բանկի պահանջի իրավունքները «Միկա Լիմիթեդ» ընկերության նկատմամբ, որոնք բխում են 23.07.2013թ. N 053-07/13Ժ Բանկային հաշիվների եւ դրամական միջոցների հաջորդող գրավի պայմանագրից, որի շրջանակներում որպես 09.06.2010թ. N053 Վարկային գծի տրամադրման պայմանագրով (ներառող բոլոր հետագա փոփոխությունները, լրացումները եւ վերաշարադրանքները) «Միկա Լիմիթեդ» ընկերության պարտավորությունների ապահովում գրավ են դրվել «Միկա Լիմիթեդ» ընկերության բանկային հաշիվներից դրամական միջոցների ստացման, փոխանցման եւ այլ կարգով տնօրինման իրավունքները:

9. Բանկի պահանջի իրավունքների մի մասը, որը բխում է 21.03.2016թ. N 07-02/01/16 «Հայաստանի Բանկերի Միության Ֆինանսական արբիտրաժ»-ի որոշումից, Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի որոշումից, որով ճանաչվել է արբիտրաժի որոշումը, եւ նշված դատական (արբիտրաժի) գործերի շրջանակներում տրված կատարողական թերթերից: Պահանջի իրավունքից հանված է եւ չի ներառում վարկի մայր գումարի մի մասը: Իրավունքները գրավասուներ «Մասակարար» ՍՊԸ-ի եւ «Միկա Քորպորեյշն» ՓԲԸ-ի գրավներով եւ վերը նշված պարտավորություններով որպես ապահովում տրամադրած «Միկա Քորպորեյշն» ՓԲԸ-ի երաշխավորությունը չեն վաճառվում եւ չեն փոխանցվում գնորդին:

բ) Բանկի պահանջի իրավունքները «Ցեմենտ Սերվիս» ՍՊԸ-ի նկատմամբ, որոնք բխում են 08.06.2013թ. N 370 Վարկային գծի պայմանագրից (ներառող բոլոր հետագա փոփոխությունները, լրացումները եւ վերաշարադրանքները), ապագայում հաշվարկվող տույժերը եւ տարեկան տոկոսները, դեբիտորական պարտքի հետ միասին (որը ավելանում է տոկոսների եւ տույժերի հաշվարկմամբ), ինչպես նաեւ գրավի եւ երաշխավորության պայմանագրերից ծագող պահանջի իրավունքները, նշված սույն «բ» կետի 1-11 ենթակետերում, կնքված որպես ապահովում N 370 Վարկային պայմանագրի, եւ համապատասխանաբար արբիտրաժի, ընդհանուր իրավասության դատարանի որոշումներով եւ դրանց կատարողական թերթերով ստացված իրավունքները, նշված սույն «բ» կետի 12 ենթակետում:

Իրավունքները գրավասուներ «Մասակարար» ՍՊԸ-ի եւ «Միկա Քորպորեյշն» ՓԲԸ-ի գրավներով եւ վերը նշված պարտավորություններով որպես ապահովում տրամադրած «Միկա Քորպորեյշն» ՓԲԸ-ի երաշխավորությունը չեն վաճառվում եւ չեն փոխանցվում գնորդին:

1. Բանկի պահանջի իրավունքները «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ի նկատմամբ, որոնք բխում են 12.06.2013թ. N 370Ի Անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) պայմանագրից, որի շրջանակներում որպես 08.06.2013թ. N370 Վարկային գծի պայմանագրով (ներառող բոլոր հետագա փոփոխությունները, լրացումները եւ վերաշարադրանքները) «ՑԵՄԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի պարտավորությունների ապահովում գրավ են դրվել «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ի անշարժ գույքերը, տեղակայված հետեւյալ հասցեներով.

❖ Կոտայքի մարզ, գյուղ Արտավազ, ջրամբարին հարող տարածք, ջրահավաքիչ կայան: Գրավադրված գույքը կազմված է շինություններից եւ կառույցներից, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 3226.98 քմ եւ 1.65 հա ընդհանուր մակերեսով հողամասից: Գրավների եւ սեփականության գրանցման վկայականները ներկայացված են;

❖ Կոտայքի մարզ, ք.Հրազդան, արտադրական գոտի, ջրամատակարարման տարողություններ: Գրավադրված գույքը կազմված է շինություններից եւ կառույցներից, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 1011.14 քմ եւ 0.4 հա ընդհանուր մակերեսով հողամասից: Գրավների եւ սեփականության գրանցման վկայականները ներկայացված են;

❖ Կոտայքի մարզ, ք.Հրազդան, արտադրական գոտի 14/17, մասնաշենք եւ անցարան: Գրավադրված գույքը կազմված է շենք-շինություններից, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 6866.2 քմ եւ 0.2614 հա ընդհանուր մակերեսով հողամասից: Գրավների եւ սեփականության գրանցման վկայականները ներկայացված են;

❖ Կոտայքի մարզ, ք.Հրազդան, արտադրական գոտի, ավտոպարկ: Գրավադրված գույքը կազմված է շենք-շինություններից, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 2900.63 քմ եւ 1.85 հա ընդհանուր մակերեսով հողամասից: Գրավների եւ սեփականության գրանցման վկայականները ներկայացված են;

❖ Կոտայքի մարզ, ք.Հրազդան, արտադրական գոտի, Գործարանային փող. N1, Ցեմենտի գործարան: Գրավադրված գույքը կազմված է շենք-շինություններից, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 57213.89 քմ եւ 55.05հա ընդհանուր մակերեսով հողամասից: Գրավների եւ սեփականության գրանցման վկայականները ներկայացված են:

2. Բանկի պահանջի իրավունքները «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ի նկատմամբ, որոնք բխում են 12.06.2013թ. N370Գ Շարժական գույքի հաջորդող գրավի պայմանագրից, որի շրջանակներում որպես 08.06.2013թ. N370 Վարկային գծի պայմանագրով (ներառող բոլոր հետագա փոփոխությունները, լրացումները եւ վերաշարադրանքները) «ՑԵՄԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի պարտավորությունների ապահովում գրավ են դրվել 1153 անվանում շարժական գույք, ներառյալ տրանսպորտային միջոցներ եւ ռելսեր, որոնց սեփականատերն է հանդիսանում «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ն:

3. Բանկի պահանջի իրավունքները «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ի նկատմամբ, որոնք բխում են 13.10.2016թ. N 370/053/380 Ընդերքօգտագործման իրավունքի գրավի պայմանագրից, որի շրջանակներում որպես 08.06.2013թ. N370 Վարկային գծի պայմանագրով (ներառող բոլոր հետագա փոփոխությունները, լրացումները եւ վերաշարադրանքները) «ՑԵՄԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի պարտավորությունների ապահովում գրավ են դրվել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքները, որոնց իրավատերն է հանդիսանում «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ն.

❖ 20.10.2012թ. տրված N ՇԱԹՎ-29/108 արդյունահանման թույլտվության հիման վրա: Տվյալ պահին թույլտվության ժամկետը լրացել է,

❖ 20.10.2012թ. տրված N ՇԱԹՎ-29/109 արդյունահանման թույլտվության հիման վրա: ժամկետը լրանում է 06.04.2017թ.-ին,

❖ 16.10.2013թ. N ՇԱԹՎ-29/483 արդյունահանման թույլտվության հիման վրա: ժամկետը լրանում է 20.10.2028թ.-ին:

4. Բանկի պահանջի իրավունքները Արթուր Մուրադովի նկատմամբ, որոնք բխում են 20.12.2013թ. N 370Հ Բաժնեմասի գրավի պայմանագրից, որի շրջանակներում որպես 08.06.2013թ. N370 Վարկային գծի պայմանագրով (ներառող բոլոր հետագա փոփոխությունները, լրացումները եւ վերաշարադրանքները) «ՑԵՄԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի պարտավորությունների ապահովում գրավ է դրվել «Ցեմենտ Սերվիս» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում 50 տոկոս բաժնեմասը, որոնց սեփականատեր է հանդիսանում Արթուր Մուրադովը:

5. Բանկի պահանջի իրավունքները Տիգրան Մարտիրոսյանի նկատմամբ, որոնք բխում են 20.12.2013թ. N 370 Զ Բաժնեմասի գրավի պայմանագրից, որի շրջանակներում որպես 08.06.2013թ. N370 Վարկային գծի պայմանագրով (ներառող բոլոր հետագա փոփոխությունները, լրացումները եւ վերաշարադրանքները) «ՑԵՄԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի պարտավորությունների ապահովում գրավ է դրվել «Ցեմենտ Սերվիս» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալում 50 տոկոս բաժնեմասը, որոնց սեփականատեր է հանդիսանում Տիգրան Մարտիրոսյանը:

6. Բանկի պահանջի իրավունքները «Միկա Լիմիթեդ» ընկերության նկատմամբ, որոնք բխում են 08.06.2013թ. N 370Դ Երաշխավորության պայմանագրից, որի շրջանակներում որպես 08.06.2013թ. N370 Վարկային գծի պայմանագրով (ներառող բոլոր հետագա փոփոխությունները, լրացումները եւ վերաշարադրանքները) «ՑԵՄԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի պարտավորությունների ապահովում տրամադրվել է «Միկա Լիմիթեդ» ընկերության երաշխավորությունը:

7. Բանկի պահանջի իրավունքները Միխայիլ Բաղդասարովի նկատմամբ, որոնք բխում են 08.06.2013թ. N 370Զ Երաշխավորության պայմանագրից, որի շրջանակներում որպես 08.06.2013թ. N370 Վարկային գծի պայմանագրով (ներառող բոլոր հետագա փոփոխությունները, լրացումները եւ վերաշարադրանքները) «ՑԵՄԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի պարտավորությունների ապահովում տրամադրվել է Միխայիլ Բաղդասարովի երաշխավորությունը:

8. Բանկի պահանջի իրավունքները «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ի նկատմամբ, որոնք բխում են 12.06.2013թ. N 370Ե Երաշխավորության պայմանագրից, որի շրջանակներում որպես 08.06.2013թ. N370 Վարկային գծի պայմանագրով (ներառող բոլոր հետագա փոփոխությունները, լրացումները եւ վերաշարադրանքները) «ՑԵՄԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի պարտավորությունների ապահովում տրամադրվել է «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ երաշխավորությունը:

9. Բանկի պահանջի իրավունքները «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ի նկատմամբ, որոնք բխում են 12.06.2013թ. N 370Ը Բանկային հաշիվների եւ դրամական միջոցների հաջորդող գրավի պայմանագրից, որի շրջանակներում որպես 08.06.2013թ. N370 Վարկային գծի պայմանագրով (ներառող բոլոր հետագա փոփոխությունները, լրացումները եւ վերաշարադրանքները) «ՑԵՄԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի պարտավորությունների ապահովում գրավ են դրվել «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ի բանկային հաշիվներից դրամական միջոցների ստացման, փոխանցման եւ այլ կարգով տնօրինման իրավունքները:

10. Բանկի պահանջի իրավունքները «Միկա Լիմիթեդ» ընկերության նկատմամբ, որոնք բխում են 08.06.2013թ. N 370 Թ Բանկային հաշիվների եւ դրամական միջոցների հաջորդող գրավի պայմանագրից, որի շրջանակներում որպես 08.06.2013թ. N370 Վարկային գծի պայմանագրով (ներառող բոլոր հետագա փոփոխությունները, լրացումները եւ վերաշարադրանքները) «ՑԵՄԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի պարտավորությունների ապահովում գրավ են դրվել «Միկա Լիմիթեդ» ընկերության բանկային հաշիվներից դրամական միջոցների ստացման, փոխանցման եւ այլ կարգով տնօրինման իրավունքները:

11. Բանկի պահանջի իրավունքները «ՑԵՄԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի նկատմամբ, որոնք բխում են 08.06.2013թ. N370Ժ Բանկային հաշիվների եւ դրամական միջոցների գրավի պայմանագրից, որի շրջանակներում որպես 08.06.2013թ. N370 Վարկային գծի պայմանագրով (ներառող բոլոր հետագա փոփոխությունները, լրացումները եւ վերաշարադրանքները) «ՑԵՄԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի պարտավորությունների ապահովում գրավ են դրվել «ՑԵՄԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի բանկային հաշիվներից դրամական միջոցների ստացման, փոխանցման եւ այլ կարգով տնօրինման իրավունքները:

12. Բանկի պահանջի իրավունքները, որոնք բխում են 25.03.2016թ. N07-01/01/16 «Հայաստանի Բանկերի Միության Ֆինանսական արբիտրաժ»-ի որոշումից, Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի որոշումից, որով ճանաչվել է արբիտրաժի որոշումը, եւ նշված դատական (արբիտրաժի) գործերի շրջանակներում տրված կատարողական թերթերից.

Իրավունքները գրավասուներ «Մասակարար» ՍՊԸ-ի եւ «Միկա Քորպորեյշն» ՓԲԸ-ի գրավներով եւ վերը նշված պարտավորություններով որպես ապահովում տրամադրած «Միկա Քորպորեյշն» ՓԲԸ-ի երաշխավորությունը չեն վաճառվում եւ չեն փոխանցվում գնորդին.

գ) Բանկի պահանջի իրավունքները «Ցեմենտ Սերվիս» ՍՊԸ-ի նկատմամբ 18.06.2013թ. Բաժնետոմսերով վավերացված իրավունքների հավասարմագրային կառավարման եւ ընկերության կառավարման պայմանագրի շրջանակներում, ապագայում հաշվարկվող տույժերի հետ միասին:

*Շարունակությունը` էջ 12*

AZG NEW SHABAT 1.QXD 22/12/2016 21:57 Page 12



# Չայկովսկու «Շչելկունչիկ»-ը՝ 3D պատկերազարդման ձեւաչափով



Պյոտր Չայկովսկու «Շչելկունչիկ» («Մարդուկ-ջարդուկ») բալետը Հայաստանում առաջին անգամ հանդիսատեսին է ներկայացվել նոր ձեւաչափով՝ համակարգչային ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ: Ապահովելով ձեւավորման 3D ձեւաչափ՝ նախագծի հեղինակները դահլիճի ամբողջ տարածքը, սյուները, խորաններն ու զարդաքանդակները դարձրել են յուրօրինակ եռաչափ էկրան եւ «կենդանացրել են» միջավայրը: Դեկտեմբերի 20-ին, Հայաստանի Ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի կատարումն ունկնդրելուն զուգահեռ՝ հանդիսատեսը եռաչափ ակնոցների միջոցով իրական աշխարհից «տեղափոխվել է» հեքիաթային աշխարհ:

Մաեստրո **Էդուարդ Թոփչյանի** ղեկավարությամբ, դեռեւս 2011 թվականից բազմիցս ներկայացվել է ռուս հանճարեղ կոմպոզիտորի բալետի երաժշտության գրական-երաժշտական կոմպոզիցիան՝ ամբողջական կատարմամբ: Ժամանակակից լուծումների եւ նորովի ներկայացման շնորհիվ, այն դարձել է առավել գունեղ ու տպավորիչ: Բեմականացման աշխատանքների հեղինակը նկարիչ-ռեժիսոր Սուքիաս Թորոսյանն է: Նախագիծը 3D ձեւաչափով իրականացրել է պրոդյուսեր Անդրանիկ Թորոսյանը: Բալետմայստերի՝ ՀՀ ժողովրդական արտիստ Հովհաննես Դիվանյանի բեմականացմամբ էլ՝ Պարարվեստի պետական ուսումնարանի սաները բալետային կատարումներով հանդես են եկել մի քանի դրվագներում: Հայաստանի Ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի գլխավոր գործընկերը ՎիվաՍել-ՄՏՍ-ն է:

«Աշխարհը խելահեղ տեմպով զարգանում է՝ տարբեր ոլորտներում անխուսափելի դարձնելով ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը: Տարբեր նպատակներից ելնելով՝ մարդկությունը փնտրում եւ գտնում է դրանք իրեն ծառայեցնելու կոնկրետ լուծումներ: Հաճելի է արձանագրել, որ մեր գործընկերները ստացել են առաջին հայացքից անհամադրելին՝ տեխնոլոգիայի եւ մշակույթի սինթեզը: Հայաստանի Ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբն այս նախաձեռնությամբ հանդիսատեսին է փոխանցում գեղեցիկ մտածողության արվեստը», - ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

«Շչելկունչիկ» բալետը 3D պատկերազարդման ձեւաչափով հանդիսատեսին կներկայացվի նաեւ դեկտեմբերի 24-ին:

# «Ծրագրավորման ժամ 2016»՝ կոդավորումից մինչեւ կիբերանվտանգություն

**«Այբ» դպրոցի եւ «Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն Հայաստան» կազմակերպության նախաձեռնությամբ՝ «Այբ» ավագ դպրոցում տեղի ունեցավ «Ծրագրավորման ժամ» (Hour of Code) միջոցառումը: Միջոցառման գլխավոր գործընկերն էր ՎիվաՍել-ՄՏՍ ընկերությունը:**

**Հայաստանում արդեն 3-րդ անգամ կազմակերպվող այս միջոցառման նպատակն է նոր տեխնոլոգիաներով եւ ծրագրավորմամբ հետաքրքրված բոլոր մարդկանց՝ անկախ տարիքից, սովորեցնել ծրագրավորման տարատեսակ լեզուներ, զարգացնել տրամաբանությունը եւ խնդիրների լուծման հմտությունները: Եվ այս ամենը մասնակիցները սովորում են խաղերի միջոցով ընդամենը մի քանի ժամում:**

**Այս տարի միջոցառմանը զուգահեռ անցկացվեցին նաեւ վարպետության դասեր՝ ՏՏ ոլորտի առաջատար մասնագետների կողմից: Նրանք սովորեցրեցին մասնակիցներին, թե ինչպես ստեղծել մեծ համակարգեր, ինչպես նախագծել խաղեր եւ որքանով է կարեւոր անվտանգ գաղտնաբառերի կիրառությունը:**

**«Ծրագրավորումը զիլ գործ է: Տարեցտարի ավելի եւ ավելի շատ մարդիկ են ոգեւորվում ծրագրավորմամբ: Ծրագրավորում սովորելու համար չկա տարիքային սահմանափակում, ամեն մեկը ցանկացած պահի կարող է սկսել սովորել: Այսօր առանց զգալի ծախսի ծրագրավորում սովորելու բազմաթիվ միջոցներ կան: Hour of Code-ի միջոցով ցանկանում ենք, որ այդ ոգեւորիչ ճանապարհը մարդիկ սկսեն մեզ հետ»,- ընդգծեց «Այբ» դպրոցի տնօրեն Արամ Փախչանյանը:**

**«Ապրելով տեխնոլոգիաներով հագեցած հազարամյակում՝ շատ կարեւոր է երեխաներին տեխնոլոգիաներ սպառող հասարակությունից դարձնել տեխնոլոգիաներ ստեղծող: Այն, ինչ մենք սպառում ենք առցանց տիրույթում, կարող ենք նաեւ ստեղծել: Նմանատիպ միջոցառումները խթան են ծառայում դպրոցականների շրջանում ծրագրավորմամբ հետաքրքրվելու, նոր գաղափարներով հանդես գալու եւ հետագայում նորարար լուծումներ ստեղծելու համար», - նշեց Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի տնօրեն Արտաշես Վարդանյանը:**

**«ՎիվաՍել-ՄՏՍ-ը շարունակաբար աջակցում է «Ծրագրավորման ժամ» միջոցառման կազմակերպմանը՝ ելնելով երիտասարդության շրջանում տեղեկատվական ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաների հանդեպ հետաքրքրություն առաջացնելու եւ խթանելու, հեռանկարում այդ ոլորտը Հայաստանի մրցակցային առավելություններից մեկը դարձնելու հրամայականից», - ասաց ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:**

**Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատոր ՎիվաՍել-ՄՏՍ-ը «Ծրագրավորման ժամ»-ի իրականացման համար տրամադրել է 150 Մբիթ/վրկ արագությամբ ինտերնետ հասանելիություն ներբեռնման եւ վերբեռնման համար՝ Wi-Fi ցանցի միջոցով, ինչը հնարավորություն է տվել ապահովել միջոցառման 300 մասնակիցների համաժամանակյա միացումը համացանցին: Արդյունքում՝ յուրաքանչյուր մասնակից միջինում ապահովվել է 3 Մբիթ/վրկ արագությամբ ինտերնետ հասանելիությամբ:**

**Միջոցառման պաշտոնական հեշթեգն էր #HourofCodeEVN: Միջոցառման համեղ գործընկերն էր menu.am-ը:**



# ԾԱՆՈՒՑՈՒՄ

*Սկիզբը՝ էջ 11*

դ) «Հրազդան Ցեմենտ» ՓԲԸ-ի 4,462,431 հատ բաժնետոմսերը, ինչը կազմում է ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը:

ե) «Հրազդան Ցեմտորգ» ՓԲԸ-ի 10,000 հատ հասարակ անվանական բաժնետոմսերը, ինչը կազմում է ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը:

Գնորդի կողմից միասնական ամբողջ լոտի գնման համար պարտադիր նախապայման է հանդիսանում աճուրդի հաղթողի (գնորդի) կամ նրա նշված անձի կողմից 25.12.2015թ. N 491 Գլխավոր վարկային պայմանագրով Բանկի նկատմամբ «Հրազդան Ցեմտորգ» ՓԲԸ-ի ամբողջ պարտքի մարումը: Պարտքի մարման պահին գնորդը Բանկից կարող է ստանալ տեղեկանք Բանկի հանդեպ «Հրազդան Ցեմտորգ» ՓԲԸ-ի ընթացիկ պարտքի մասին:

Մինչեւ բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքների ձեւակերպումը, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը պետք է համաձայնություն տա տվյալ գործարքի կատարման, գնորդի եւ վաճառողի համատեղ ներկայացված դիմումի հիման վրա:

ՀՀ օրենսդրության շրջանակներում Բանկը պատասխանատվություն է կրում միայն «ա», «բ», «գ» ենթակետերում նշված պահանջի իրավունքների անվավերության մասով: Բանկի տվյալ պատասխանատվությունը սահմանափակվում է միայն իրական վնասով: Սակայն, հնարավոր է ապահովման պայմանագրերի առկայություն, որոնք չեն վերակնքվել եւ որոնց կից չեն կնքվել լրացուցիչ համաձայնագրեր, կապված հիմնական վարկային պայմանագրի վերաշարադրման հետ: Բանկը այդ պայմանագրերի հնարավոր անվավերության համար պատասխանատվություն չի կրում: Գնորդին փոխանցվում են պահանջի իրավունքները գրավի եւ երաշխավորության պայմանագրերով միայն այն պահանջի իրավունքների մասով, որոնք փոխանցվում են «Միկա Լիմիթեդ» ընկերության եւ «Ցեմենտ սերվիս» ՍՊԸ-ի հիմնական պարտավորություններով ըստ «ա» եւ «բ» կետերում նշված պայմանագրերի: Համապատասխանաբար, գրավի եւ երաշխավորության պայմանագրերով ապահովված այլ պարտավորությունները իրավաբանորեն կիրառելի չեն եւ գնորդին չեն փոխանցվում: Գրավի եւ երաշխավորության պայմանագրերի շրջանակներում պայմանագրերով գնորդին փոխանցվում են իրավունքները այն ծավալով, որքանով նրանք կարող են կիրառվել եւ կատարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում: Բոլոր պայմանագրերի պատճենները կգտնվեն աճուրդի կազմակերպչի մոտ, որոնց հետ կարելի է ծանոթանալ: Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից բաժնետոմսերի վաճառքին հավանություն չտալու դեպքում, Լոտը չվաճառելու համար Բանկը գնորդի հանդեպ պատասխանատվություն չի կրում: Լոտի մասով ամբողջ տեղեկատվությունը, որին տիրապետում է Բանկը, ներկայացված է սույն հայտարարությունում, ինչպես նաեւ դեպոնացված են աճուրդի կազմակերպչի մոտ: Չնայած նրան, որ Բանկը գործադրել է խելամիտ ջանքեր Լոտի մասին հավաստի տեղեկատվություն տրամադրելու համար, Բանկը պատասխանատվություն չի կրում սույն փաստաթղթի հավելվածներում եւ Փաստաթղթերում Լոտի մասով կամ Լոտի հետ կապված ցանկացած այլ փաստաթղթերում ներկայացված տեղեկությունների անճշտության եւ ոչ ամբողջական լինելու համար: Բացի վերը նշված պատասխանատվությունից, Բանկը ցանկացած այլ պարտավորությունների մասով գնորդի հանդեպ որեւէ այլ պատասխանատվություն չի կրում՝ ներառյալ ցանկացած բնույթի հնարավոր վնասները, որոնք կապված են ձեռքբերված Լոտի կամ/եւ «Հրազդան Ցեմտորգ» ՓԲԸ-ի պարտքերի մարման հետ:

Գնորդի կողմից գնման համար պարտադիր նախապայման է հանդիսանում աճուրդի հաղթողի (գնորդի) կամ նրա նշված անձի կողմից 25.12.2015թ. N 491 Գլխավոր վարկային պայմանագրով Բանկի նկատմամբ «Հրազդան Ցեմտորգ» ՓԲԸ-ի ամբողջ պարտքի մարումը:

Բոլոր փաստաթղթերը կապված այս ակտիվների վաճառքի հետ գտնվում են բորսայի հարթակում: Լոտի մեկնարկային գինը սահմանված է 18,132,240,000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ վկայական: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է մեկնարկային գների 5%-ի չափով, որը պետք է վճարվի Կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570010034150100 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ յուրաքանչյուր աճուրդին նախորդող աշխատանքային օրվա ժ. 16:00-ն, ինչի կապակցությամբ տրվում է վկայական: Աճուրդները դասական եղանակով՝ 10.01.2017թ-ին ժ. 12:00-ին եւ այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, յուրաքանչյուր երրորդ աշխատանքային օրը մեկնարկային գնի իջեցումով, բայց ոչ պակաս սահմանված նվազագույն գնից:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը: Լոտը կարող է ուսումնասիրվել սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ աճուրդի ավարտի օրվան նախորդող աշխատանքային օրը, ժ. 11:00-ից մինչեւ 17:00-ը՝ դիմելով բանկին կամ կազմակերպչին վերը նշված հասցեով: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդի անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Ագաթանգեղոս 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք այցելել www.borsa.am կայք կամ զանգահարել (010) 56-31-07 հեռախոսահամարով:

VIVACELL MTS

ՎիվաՍել-ՄՏՍ-ը տեղեկացնում է, որ մինչեւ 2016 թ. դեկտեմբեր վավերականության ժամկետով չօգտագործված վերալիցքավորման քարտերը 2017 թ. հունվարի 1-ից կհանվեն շրջանառությունից եւ այլեւս օգտագործման ենթակա չեն լինի:

Այն բաժանորդները, ովքեր ունեն նշված քարտերից, սակայն մինչ օրս չեն օգտագործել, կարող են օգտագործել դրանք մինչեւ 2016 թ. դեկտեմբերի 31-ը (ներառյալ):

«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԳ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 22.12.2016, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: